

ՄԱՍ 1.

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2009-2019թթ.

Գլուխ 1. Ժողովրդագրություն և միգրացիա

1.1. Բնակչության թվաքանակի փոփոխությունը

Բնակչության թվաքանակի ընթացիկ հաշվառումն իրականացվում է ՀՀ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշով՝ որպես հաշվարկի հիմք ընդունելով ՀՀ վերջին՝ 2011թ.-ի մարդահամարի արդյունքները, որոնք արդիականացվում են հաշվետու ժամանակաշրջանում արձանագրված բնակչության բնական հավելաճի և միգրացիայի մնացորդի (գնահատված ցուցանիշի²) տվյալներով:

2020թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշը կազմել է 2 959.7 հազ. մարդ և 2019թ. տարեկզբի համեմատ այն նվազել է 5.6 հազ. մարդով կամ 0.2%-ով:

ՀՀ մշտական բնակչության կազմում 2020թ. տարեկզբի դրությամբ քաղաքային և գյուղական բնակչության մասնաբաժինները կազմել են, համապատասխանաբար՝ 63.9% և 36.1%: Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության 47.2 %-ը կազմել են տղամարդիկ, իսկ 52.8%-ը՝ կանայք: 2020թ.-ի տարեկզբի դրությամբ բնակչության միջին տարիքը կազմել է 36.9 տարի, իսկ տղամարդկանց և կանանց համար, համապատասխանաբար՝ 34.8 և 38.8 տարի:

Աղյուսակ 1.1 Հայաստան. Մշտական բնակչության թվաքանակն ըստ սեռի և տարիքի 2020թ. հունվարի 1-ի դրությամբ

Տարիքը	Քաղաքային բնակչություն			Գյուղական բնակչություն			Ամբողջ բնակչություն		
	տղա-մարդ	կին	ընդամենը	տղա-մարդ	կին	ընդամենը	տղա-մարդ	կին	ընդամենը
0-4	65 486	59 776	125 262	35 089	30 752	65 841	100 575	90 528	191 103
5-9	69 585	62 117	131 702	42 050	35 884	77 934	111 635	98 001	209 636
10-14	65 218	58 316	123 534	40 589	34 720	75 309	105 807	93 036	198 843
15-19	54 080	48 203	102 283	35 382	30 045	65 427	89 462	78 248	167 710
20-24	52 462	50 249	102 711	36 363	35 242	71 605	88 825	85 491	174 316
25-29	65 317	74 758	140 075	46 637	48 877	95 514	111 954	123 635	235 589
30-34	73 965	88 460	162 425	49 778	50 193	99 971	123 743	138 653	262 396
35-39	72 462	84 536	156 998	40 742	41 366	82 108	113 204	125 902	239 106
40-44	59,944	69 230	129 174	29 270	33 328	62 598	89 214	102 558	191 772
45-49	48 935	59 861	108 796	25 895	30 669	56 564	74 830	90 530	165 360
50-54	41 286	57 443	98 729	30 035	34 158	64 193	71 321	91 601	162 922
55-59	52 354	74 126	126 480	37 492	40 963	78 455	89 846	115 089	204 935
60-64	52 294	74 359	126 653	30 519	33 804	64 323	82 813	108 163	190 976
65-69	40 351	57 318	97 669	17 069	21 571	38 640	57 420	78 889	136 309
70-74	23 902	37 625	61 527	8 073	12 639	20 712	31 975	50 264	82 239
75-79	15 262	24 022	39 284	5 882	10 215	16 097	21 144	34 237	55 381
80-84	14 443	25 518	39 961	7 492	13 904	21 396	21 935	39 422	61 357
85+	7 545	11 278	18 823	3 757	7 164	10 921	11 302	18 442	29 744
Ընդամենը	874 891	1 017 195	1 892 086	522 114	545 494	1 067 608	1 397 005	1 562 689	2 959 694


Աղբյուրը. ԱՄՄՍՍՍ

¹ Հայաստանի Հանրապետության 2011թ. մարդահամարի տվյալներով (2011թ. հոկտեմբերի 12-21-ը) Հայաստանի մշտական բնակչության թվաքանակը (de jure բնակչություն) կազմել է՝ 3 018 854 մարդ, իսկ առկա բնակչության թվաքանակը (de facto բնակչություն)՝ 2 871 771 մարդ:

² Ցուցանիշները վերագնահատվել (ճշգրտվել) են հաշվետու ժամանակաշրջանին նախորդող տարվա՝ Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքներով ձևավորված, միգրացիոն գործընթացներն արտացոլող ամփոփ ցուցանիշների հիման վրա, մանրամասն մեթոդաբանական պարզաբանումները տես <http://www.armstat.am/am/?nid=82&id=1547>:

2020թ. տարեկգրի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակի 63.8%-ը կազմել է աշխատունակ բնակչությունը (16-62 տարեկան), 21.5%-ը՝ աշխատունակ տարիքից ցածր (0-15 տարեկան), իսկ 14.7%-ը՝ աշխատունակ տարիքից բարձր (63 և ավելի տարեկան) բնակչությունը: ՀՀ 1 000 աշխատունակ տարիքի բնակչությանը բաժին է ընկել անաշխատունակ տարիքի 566 մարդ (230 տարեց և 336 0-15 տարեկան երեխա):

Գծապատկեր 1.1: Հայաստան. Բնակչության տարիքային կառուցվածքը ըստ հիմնական տարիքային խմբերի, 2000-2020թթ. տարեկգրի դրությամբ



Աղբյուրը. ԱՐՄՍՍՍ

Աղյուսակ 1.2. Հայաստան. Բնակչության խնամառության գործակիցները, 2000-2019թթ.

Տարի	Խնամառության գործակիցը, %		
	Ընդամենը	Երիտասարդների (0-15)	Տարեցների (63+)
2000	58.6	41.8	16.8
2006	54.1	35.1	19.0
2010	46.9	30.1	16.8
2011	47.0	30.1	16.9
2012	47.4	29.7	17.7
2013	47.5	29.7	17.8
2014	48.3	30.1	18.3
2015	49.4	30.6	18.8
2016	50.9	31.4	19.5
2017	53.7	32.7	20.9
2018	55.2	33.3	21.9
2019	56.6	33.6	23.0

Աղբյուրը. ԱՐՄՍՍՍ

Պտղաբերության (ծնելիության գումարային) գործակիցը՝ ծնունակ տարիքի (15-49 տարեկան) մեկ կնոջ հաշվով 2019թ. կազմել է 1.599 միավոր, 2018թ.՝ 1.572 միավորի համեմատ, ինչը զգալիորեն ցածր է բնակչության պարզ վերարտադրության¹ համար անհրաժեշտ՝ 2.150 ցուցանիշից: Բնակչության վերարտադրության **Բրուտտո** գործակիցը² 2019թ. կազմել է 0.760, իսկ բնակչության վերարտադրության **Նետտո** գործակիցը³ կազմել է՝ 0.730 միավոր:

Աղյուսակ 1.3: Հայաստան. Ծնելիության տարիքային գործակիցները 2010-2019թթ.

Տարիներ	Ծնվածների միջին թվաքանակը համապատասխան տարիքի 1000 կնոջ հաշվով							
	15-19	20-24	25-29	30-34	35-59	40-44	45-49	15-49
2010թ.								
Ընդամենը	27.1	110.1	91.9	47.9	16.8	3.2	0.2	50.8
Քաղաքային	18.9	85.9	82.1	50.3	20.3	4.3	0.3	48.0
Գյուղական	44.9	182.2	123.5	42.3	11.2	1.9	0.1	56.4
2017թ.								
Ընդամենը	21.1	110.5	97.1	56.1	25.1	4.7	0.5	49.5
Քաղաքային	14.5	106.8	105.8	63.1	28.7	5.8	0.7	50.8
Գյուղական	31.1	115.6	82.9	42.9	17.8	2.6	0.1	47.4
2018թ.								
Ընդամենը	19.0	109.2	98.2	57.0	25.5	5.1	0.5	48.5
Քաղաքային	13.5	103.8	110.9	64.7	29.5	6.3	0.6	50.5
Գյուղական	27.4	116.8	77.7	42.8	17.1	2.6	0.2	45.1
2019թ. - Ընդամենը	16.8	110.6	100.6	59.1	26.2	5.9	0.5	48.2
Քաղաքային	11.9	103.7	113.3	66.5	29.8	7.1	0.8	49.7
Գյուղական	24.4	120.3	80.8	45.7	18.9	3.5	0.1	45.6

Աղբյուրը. ԱՐՄՍՍՍՍ

2019թ. մոր միջին տարիքը երեխայի ծննդյան ժամանակ կազմել է 27.6 տարի, առաջին երեխայի ծննդյան ժամանակ՝ 25.2 տարի, 2018թ. համապատասխանաբար՝ 27.3 և 25.1 տարվա համեմատ:

Ըստ ծննդի հաջորդականության՝ երրորդ և բարձր կարգի ծնունդները 2019թ. կազմել են հանրապետության կենդանի ծնվածների ընդհանուր թվաքանակի 25.0 % և նախորդ տարվա համեմատ ցուցանիշն աճել է 2.4 %-ային կետով:

Բնակչության բնական շարժը: 1990-ականներից Հայաստանում արձանագրված անկայուն տնտեսական, սոցիալական և քաղաքական իրավիճակն իր ազդեցությունն է թողել նաև բնակչության վերարտադրողական վարքագծի վրա: Այսպես, ծնելիության ընդհանուր գործակիցը 2019թ.-ին, 1000 բնակչի հաշվով, կազմել է 12.2 պրոմիլ, 2018թ. 12.3 պրոմիլի համեմատ:

2019թ.-ին գրանցված կենդանի ծնվածների 31.8%-ն արձանագրվել են չգրանցված ամուսնություններից (այդ թվում՝ արտամուսնական):

¹ Պարզ վերարտադրության դեպքում ծնողներին փոխարինող երեխաների սերունդը և ծնողների սերունդը հավասար են իրենց բացարձակ թվաքանակներով:

² Ծնունակ տարիքում միջին հաշվով քանի աղջիկ երեխա կծնի կինը, ծնելիության տվյալ տարվա մակարդակի պահպանման դեպքում

³ միջին հաշվով քանի աղջիկ երեխա կծնի մեկ կինն իր ողջ կյանքի ընթացքում, որոնք կհասնեն մոր տարիքին, իրենց ծնվելուց՝ յուրաքանչյուր տարիքում ծնելիության և մահացության տվյալ ժամանակաշրջանի մակարդակների պահպանման դեպքում

2019թ.-ին՝ նախորդ տարվա համեմատ, արձանագրվել է մահվան դեպքերի աճ՝ 1.7%-ով, իսկ մահացության ընդհանուր գործակցն աճել է՝ 0.1 պրոմիլային կետով և կազմել 8.8 պրոմիլ: Ընդ որում, մահացության գործակիցը, համեմատաբար, ավելի բարձր է քաղաքային բնակչության շրջանում՝ 8.9, քան գյուղականում՝ 8.7 պրոմիլ:

Աղյուսակ 1.4: Հայաստան. Ծնելիության ու մահացության ցուցանիշները, 2000-2019թթ.

	Ծնունդ						Մահ					
	Հազար մարդ			1000 բնակչի հաշվով			Հազար մարդ			1000 բնակչի հաշվով		
	Ընդամենը	Քաղաք	Գյուղ	Ընդամենը	Քաղաք	Գյուղ	Ընդամենը	Քաղաք	Գյուղ	Ընդամենը	Քաղաք	Գյուղ
2000	34.3	21.4	12.9	10.6	10.3	11.4	24.0	15.7	8.3	7.5	7.5	7.3
2005	37.5	23.8	13.7	11.9	11.8	12.1	26.4	17.1	9.3	8.4	8.5	8.2
2010	44.8	28.2	16.6	14.7	14.6	14.9	27.9	17.8	10.1	9.2	9.2	9.1
2011	43.3	27.6	15.7	14.3	14.4	14.2	28.0	17.8	10.2	9.2	9.3	9.1
2012	42.5	27.1	15.4	14.0	14.2	13.8	27.6	17.6	10.0	9.1	9.2	9.0
2013	41.8	26.8	15.0	13.8	14.0	13.6	27.2	17.4	9.8	9.0	9.1	8.9
2014	43.0	27.8	15.2	14.3	14.6	13.8	27.7	17.6	10.1	9.2	9.2	9.2
2015	41.7	27.1	14.6	13.9	14.2	13.4	27.9	17.7	10.1	9.3	9.3	9.3
2016	40.6	26.5	14.1	13.5	13.9	13.0	28.2	18.3	9.9	9.4	9.6	9.2
2017	37.7	24.6	13.1	12.6	13.0	12.1	27.1	17.4	9.7	9.1	9.2	9.0
2018	36.6	24.3	12.3	12.3	12.8	11.5	25.8	16.7	9.1	8.7	8.8	8.5
2019	36.0	23.7	12.3	12.2	12.5	11.5	26.2	16.9	9.3	8.8	8.9	8.7

Աղբյուրը. ԱՐՄՍՍՍՍ

Նշում. 2006-2011թթ. գործակիցները վերագնահատվել են ըստ ՀՀ 2011թ. մարդահամարի արդյունքներով վերահաշվարկված մշտական բնակչության թվաքանակների;

Քերևանի և մարզերի բնակչության բնական շարժի ցուցանիշները ներկայացված են վիճակագրական հավելվածի աղյուսակ A1.1-ում:

Ծննդյան և մահվան ցուցանիշների տարբերությունով ձևավորված բնակչության բնական հավելաճը 2019թ. կազմել է 9.8 հազ.մարդ՝ 2018թ. 10.8 հազ. մարդու համեմատ: 2019թ.-ին ՀՀ բնակչության բնական հավելաճի ընդհանուր գործակիցը կազմել է 3.4 պրոմիլ (1000 բնակչի հաշվով), նախորդ տարվա համեմատ ցուցանիշը նվազել է 0.2 պրոմիլային կետով:

Մահացության հիմնական պատճառները: Մահացության պատճառական կառուցվածքում արյան շրջանառության համակարգի հիվանդություններից և չարորակ նորագոյացություններից արձանագրված դեպքերը կազմում են ընդհանուր մահերի շուրջ երեք քառորդը: Նախորդ տարվա համեմատ ավելացել են շնչառական օրգանների, չարորակ նորագոյացությունների, արտաքին պատճառների, մարսողական օրգանների հիվանդություններով պայմանավորված մահվան դեպքերը:

Աղյուսակ 1.5: Հայաստան. Մահացության ցուցանիշներն ըստ մահվան հիմնական պատճառների, 2018 և 2019թթ.

Մահացության պատճառները	Բացարձակ թվաքանակ, մարդ				Ցուցանիշը, 100 000 բնակչի հաշվով			
	Տղամարդիկ		Կանայք		Տղամարդիկ		Կանայք	
	2018թ.	2019թ.	2018թ.	2019թ.	2018թ.	2019թ.	2018թ.	2019թ.
Մահացածներ, ընդամենը	13 021	13 384	12 730	12 802	926.8	956.4	813.9	819.0
<i>այդ թվում՝ ըստ մահվան հիմնական պատճառների.</i>								
Արյան շրջանառության համակարգի հիվանդություններից	6 764	6 764	7 445	7 305	481.4	483.3	476.0	467.3
Զարրակ նորագոյացություններից	2 831	2 999	2 368	2 435	201.5	214.3	151.4	155.8
Էնդոկրին համակարգի հիվանդություններից	216	213	382	330	15.4	15.2	24.4	21.1
Մահացություն արտաքին պատճառներից (զԺբախտ պատահարներ, թունավորումներ, վնասվածքներ և այլն)	794	821	264	256	56.5	58.7	16.9	16.4
Շնչառական օրգանների հիվանդություններից	983	1 007	995	1 162	70.0	72.0	63.6	74.3
Մարտոդական օրգանների հիվանդություններից	640	690	577	544	45.6	49.3	36.9	34.8
Միզասեռական օրգանների հիվանդություններից	174	169	172	143	12.4	12.1	11.0	9.1
Վարակիչ և մակաբուծային հիվանդություններից	104	115	59	50	7.4	8.2	3.8	3.2
Այլ հիվանդություններից	515	606	468	577	36.6	43.3	29.9	37.0

Աղբյուրը. ԱՐՄՍՍՍ

Արական և իգական սեռերի մահացության տարբեր մակարդակներով պայմանավորված, տարբերվում են նաև տղամարդկանց և կանանց կյանքի սպասվող միջին տևողության ցուցանիշները: 2019թ.-ին կյանքի սպասվող միջին տևողությունը տղամարդկանց համար կազմել է 73.1 տարի, իսկ կանանց համար՝ 79.5 տարի: Քաղաքային բնակչության կազմում այդ ցուցանիշը տղամարդկանց համար կազմել է 73.2 կանանց համար՝ 79.7 տարի, իսկ գյուղական բնակչության համար, համապատասխանաբար՝ 72.7 և 79.1 տարի:

Միգրացիա: Ըստ 2019թ. ՏՏԿԱՀ արդյունքներով արձանագրվել է, որ հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ իրենց բնակավայրերից բացակայել են տնային տնտեսության (տ/տ) անդամների՝ 5.1%-ը, իսկ 14.4 %-ը՝ 2014-2019թթ.-ի ընթացքում երեք ամիս և ավելի ժամկետով ապրել են ՀՀ այլ բնակավայրում կամ այլ երկրում ու վերադարձել են իրենց մեկնումներից:

Աղյուսակ 1.6: Հայաստան. Տնային տնտեսությունների անդամների ներգրավվածությունը միգրացիոն գործընթացներում, 2019թ.

<i>Ներգրավվածությունը</i>	Տոկոսով՝ ընդամենից
Այո, մեկնել են և չեն վերադարձել	49.6
Այո, մեկնել են և վերադարձել են երեք ամիս և ավելի ժամկետով բացակայությունից հետո	50.4
Ընդամենը	100

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019թ.

Աղյուսակ 1.7: Հայաստան. Տնային տնտեսության բացակա անդամների բաշխումն ըստ բացակայության տևողության և գտնվելու վայրի, 2019թ. (%)

Գտնվելու վայրը	Բացակայության ժամկետը			Ընդամենը
	<3 ամիս	3-12 ամիս	>12 ամիս	
ք. Երևան	42.5	40.6	16.9	100
ՀՀ մարզեր	37.8	35.2	26.9	100
ԱՀ	16.0	41.4	42.6	100
ՌԴ	30.6	53.0	16.3	100
ԱՊՀ այլ երկիր	18.0	70.0	12.0	100
Եվրոպական երկիր	18.4	25.9	55.7	100
ԱՄՆ/Կանադա	24.7	13.7	61.6	100
Այլ	3.0	65.3	31.7	100
Ընդամենը	30.0	48.0	22.0	100

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019թ.

Մեկնած և 2019թ. դրությամբ դեռևս չվերադարձած տնային տնտեսության անդամների՝ 18.6%-ի տեղաշարժերի բնույթը եղել է ներհանրապետական՝ Երևան քաղաքի/ՀՀ մարզերի միջև, 11.8%-ինը՝ Արցախի Հանրապետության հետ, իսկ մնացած 69.6%-ինը եղել է միջպետական, որի գերակշիռ մեծամասնության՝ 90% տեղաշարժերն իրականացվել են Ռուսաստանի Դաշնության հետ:

Աղյուսակ 1.8: Հայաստան. Մեկնած և 2019թ. դրությամբ չվերադարձած տնային տնտեսության անդամների բաշխումն՝ ըստ մեկնելու պատճառի և բացակայության տևողության

(%)

Մեկնելու հիմնական պատճառը	Բացակայության տևողությունը			Ընդամենը
	<3ամիս	3 -12ամիս	≥ 12	
1. Աշխատել/ Աշխատանք փնտրել	31.0	52.8	16.2	100
2. Ընտանեկան	39.3	21.3	39.4	100
3. Բնակության	5.1	61.9	33.0	100
4. Մասնավոր այց բարեկամներին, ընկերներին	74.1	25.9	-	100
5. Ուսում / վերապատրաստում	42.3	39.9	17.7	100
6. Առողջական / բուժման	41.0	33.7	25.4	100
7. Այլ	0.9	12.2	43.9	100
Ընդամենը	30.0	48.0	22.0	100

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019թ.

2014-2019թթ. ընթացքում մեկնած և 2019թ. դրությամբ վերադարձած տնային տնտեսության անդամների՝ 8.8%-ի տեղաշարժերի բնույթը եղել է ներհանրապետական՝ Երևան քաղաքի/ՀՀ մարզերի միջև, 11%-ինը՝ Արցախի Հանրապետության հետ, իսկ մնացած 80.2%-ինը եղել է միջպետական, որի գերակշիռ մեծամասնության՝ 87.8%-ի տեղաշարժերն իրականացվել են Ռուսաստանի Դաշնության հետ:

Աղյուսակ 1.9: Հայաստան. Միգրացիոն գործընթացներում ներգրավված տնային տնտեսության անդամներն ըստ վերադարձի տարեթվի և վայրի

(%)

	Վերադարձի վայրը							
	Ք.Երևան	ՀՀ մարզեր	ԱՀ	ՌԴ	ԱՊՀ այլ երկիր	Եվրոպական երկիր	Այլ	Ընդամենը
2014թ.	2.3	0.4	-	1.5	29.1	2.0	-	1.9
2015թ.	2.7	9.9	2.2	4.7	-	-	12.9	5.2
2016թ.	17.3	14.2	18.4	6.6	9.9	16.4	11.9	10.2
2017թ.	14.7	19.2	22.4	14.4	-	5.0	18.4	15.4
2018թ.	32.8	36.6	28.9	41.6	59.5	29.6	17.8	38.2
2019թ.	30.2	19.7	28.1	31.2	1.5	47.0	39.0	29.1
Ընդամենը	100	100	100	100	100	100	100	100

Աղբյուրը. *SSՀԱՀ 2019թ.*

Հետազոտված ժամանակահատվածում (2014-2019թթ.), ըստ ՄԱԿ-ի սահմանած մեթոդաբանության, միջազգային միգրանտները կազմել են երկրից 3 ամիս և ավելի ժամկետով բացակա տ/տ անդամների (չվերադարձածների) շուրջ 84%-ը (մոտ 85 000 հազ.մարդ), որոնցից կարճաժամկետ միգրանտները՝ 3-12 ամիս տևողությամբ երկրից բացակայածները (ներառված չեն՝ հանգստի, ընկերների/բարեկամներին այցելության, արձակուրդի, գործնական, բուժման մեկնածները) կազմել են 68%, իսկ երկարաժամկետ միգրանտները՝ մեկ տարի և ավելի ժամկետով բացակայողները կազմել են 32%: Հետազոտության արդյունքներով արձանագրվել է, որ 2014-2019թթ. միջակայքում 3 ամիս և ավելի տևողությամբ ՀՀ-ից մեկնած և 2019թ.-ի դրությամբ դեռևս չվերադարձած տ/տ միգրանտ անդամների գնահատված միջին տարեկան թվաքանակը կազմել է շուրջ 16 հազ. մարդ:

Հետազոտության արդյունքներով արձանագրվել է նաև, որ տ/տ անդամների շուրջ 3.7%-ը՝ մտադրություն է ունեցել մոտակա 12 ամիսների ընթացքում մեկնել այլ երկիր, 0.5 %-ը՝ ք.Երևան կամ ՀՀ այլ մարզ, իսկ 95.8 %-ը՝ նման մտադրություն չի ունեցել:

1.2. Տնային տնտեսությունների կազմը

Ըստ 2019թ.-ի տ/տ հետազոտության արդյունքների՝ մշտական բնակչության հաշվարկով, տնային տնտեսության անդամների միջին թվաքանակը կազմել է 3.6 մարդ՝ 3.4 քաղաքային բնակավայրերում և 4.0 գյուղական բնակավայրերում, իսկ առկա բնակչության հաշվարկով՝ համապատասխանաբար, 3.4, 3.2 և 3.7 մարդ:

2019թ.-ին տնային տնտեսությունների ավելի քան կեսը կազմել են երեք և պակաս անդամ ունեցող տ/տ-ները՝ 2010թ.՝ 38.2% և 2017թ. 49%-ի համեմատ (աղյուսակ 1.10):

Աղյուսակ 1.10: Հայաստան. Տնային տնտեսությունների բաշխումն ըստ դրանց կազմի (ըստ մշտական բնակչության) 2010-2019թթ.-ին

(ըստ մշտական բնակչության)

Տնային տնտեսությունների կազմը	Տոկոսներով ընդհանուրի նկատմամբ						
	2010թ.	2012թ.	2014 թ.	2016 թ.	2017թ.	2018 թ.	2019 թ.
Տնային տնտեսություններ կազմված՝	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
մեկ անդամից	10.0	10.9	12.9	13.8	14.8	14.3	15.7
2 անդամից	14.0	16.1	17.1	17.4	19.1	19.5	18.9
3 անդամից	14.2	15.0	14.1	15.7	15.1	16.7	15.6
4 անդամից	21.0	20.6	19.8	19.7	18.9	18.9	18.6
5 անդամից	18.0	16.5	15.7	15.2	14.8	15.2	14.3
6 և ավելի անդամներից	22.8	20.9	20.4	18.2	17.3	15.4	16.9

Աղբյուրը. 2010 - 2019թթ.-ի ՏՏԿԱՀ

Բազմանդամ (6 և ավելի անդամ ունեցող) տնային տնտեսությունները գերակշռել են գյուղական բնակավայրերում՝ 24.8%, քաղաքայինի՝ 12.6%-ի համեմատ, իսկ քաղաքային բնակավայրերում գերակշռել են չորս և պակաս անդամներից բաղկացած տնային տնտեսությունները և կազմել են՝ 73.4%, գյուղականի՝ 60.4 %-ի համեմատ:

2019թ. նախորդ տարվա համեմատ նվազել են մեկ (0.1 տոկոսային կետով) և երկու (0.6 տոկոսային կետով) երեխա ունեցող տ/տ-ների մասնաբաժինները, իսկ երեք (0.2 տոկոսային կետով) և չորս (0.2 տոկոսային կետով) երեխաներ ունեցող տ/տ-ների մասնաբաժիններն աճել են (Աղյուսակ 1.11):

Աղյուսակ 1.11: Հայաստան. Մինչև 16 տարեկան երեխա ունեցող տնային տնտեսությունների կառուցվածքն ըստ երեխաների թվաքանակի, 2010 - 2019թթ.


(ըստ մշտական բնակչության)

Տնային տնտեսությունների կազմը	Տոկոսներով ընդհանուրի նկատմամբ						
	2010թ.	2012թ.	2014թ.	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.
Տնային տնտեսություններ ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում՝ ըստ երեխաների թվաքանակի.							
1 երեխա	19.9	18.5	18.1	17.0	16.3	15.8	15.7
2 երեխա	20.0	18.2	18.5	19.2	17.1	17.8	16.4
3 երեխա	5.3	5.0	5.2	5.2	5.0	5.1	5.3
4 երեխա	1.0	0.7	0.8	0.7	0.8	0.6	0.8
5 և ավելի երեխա	0.4	0.4	0.2	0.2	0.2	0.3	0.3
երեխա չունեցող	53.4	57.2	57.2	57.7	60.6	60.4	61.5

Աղբյուրը. 2010 - 2019թթ. ՏՏԿԱՀ.

2019թ.-ին, ինչպես և նախորդող վերջին տարիներին, ըստ տ/տ հետազոտության արդյունքների, տնային տնտեսությունների կազմում՝ յուրաքանչյուր տասից վեցում չեն եղել մինչև 16 տարեկան երեխաներ, քաղաքային բնակավայրերում այդպիսի տնային տնտեսությունների մասնաբաժինը կազմել է՝ 63.1%, գյուղականի՝ 58.6%-ի համեմատ:

Գծապատկեր 1.2: Հայաստան. Մինչև 16 տարեկան երեխա ունեցող քաղաքային և գյուղական տնային տնտեսությունների բաշխումն ըստ երեխաների թվաքանակի, 2018-2019թթ.



Աղբյուրը. 2018 - 2019թթ.-ի ՏՏԿԱՀ

2019թ. տնային տնտեսությունների գերակշիռ մասի գլխավոր են հանդիսացել տղամարդիկ՝ 65.6%, իսկ կին գլխավոր ունեցող տնային տնտեսությունների մասնաբաժինը կազմել է՝ 34.4% (քաղաքային բնակավայրերում՝ 37.6%, իսկ գյուղական բնակավայրերում՝ 28.2%):

2019թ. արձանագրվել է ամուսնության 15 561 և ամուսնալուծության 3 880 դեպք, իսկ ամուսնության և ամուսնալուծության ընդհանուր գործակիցները կազմել են, համապատասխանաբար՝ 5.3‰ և 1.3‰, 1 000 բնակչի հաշվով:

Գլուխ 2. Աղքատության պատկերը Հայաստանում 2009-2019թթ.-ին

2.1. Ներածություն

2019թ.-ին Հայաստանի տնտեսությունը նախորդ տարվա նկատմամբ գրանցել է զգալի աճ՝ 7.6%, որը գերազանցում է 2018թ.-ին գրանցված 5.2% աճին: Սպառողական գների ինդեքսը 2018թ.-ի նկատմամբ աճել է 1.4 %-ով:

2019թ.-ին աղքատության մակարդակը գնահատվել է 26.4%, որը համադրելի չէ 2018թ.-ին ՀՀ-ում արձանագրված 23.5% աղքատության ցուցանիշին՝ պայմանավորված աղքատության գծի, ինչպես նաև սպառման և աղքատության չափման մեթոդաբանության փոփոխությամբ:

2019թ.-ի համար գնահատված աղքատության մակարդակները 2009 թվականի սպառման գամբյուղի և մեթոդաբանության վրա հիմնված աղքատության գնահատման ցուցանիշներից տարբերվում են երեք առումով.

ա) սպառման ազդեցացված ցուցանիշը հաշվարկվել է ՏՏԿԱՀ-ի վերանայված

հարցաշարի տվյալների հիման վրա,

բ) ՏՏԿԱՀ-ում կիրառվել է տվյալների հավաքման նոր մեթոդ՝ գրասալիկի (պլանշետ) միջոցով,

գ) փոփոխվել է աղքատության գծերի հաշվարկման մեթոդաբանությունը:

2.1.1. Հիմնական հասկացություններ

Բնակչության բարեկեցության, կենսամակարդակի գնահատման կարևոր քանակական ցուցանիշ է համարվում տվյալ երկրում աղքատության մակարդակը: Աղքատությունն արտահայտվում է տարբեր ձևերով և շոշափում կյանքի տարբեր կողմերը՝ սպառում, պարենային անվտանգություն, առողջություն, կրթություն, իրավունքներ, ներառյալ ձայնի, անվտանգության, արժանապատվության և արժանապատիվ աշխատանքի իրավունքը:

Ինչպես նախորդ զեկույցներում, այս անգամ ևս բնակչության կենսամակարդակի փոփոխության դինամիկան նկարագրվում է նյութական և ոչ նյութական աղքատության տեսանկյունից:

Ոչ նյութական աղքատության բնորոշիչներն են՝ վատ առողջությունը, կրթական ցածր մակարդակը կամ անգրագիտությունը, սոցիալական անտեսվածությունը կամ մերժվածությունը, անպաշտպանվածությունը, իրավունքների և խոսքի ազատության անկիրառելիությունը, այն է՝ գործնականում սեփական խնդիրների մասին հայտնելու անկարողությունը: Ոչ նյութական աղքատության հաղթահարման հիմնական ուղղությունը կրթական, առողջապահական և սոցիալական ծառայությունների մատչելիության բարելավումն է, այն է՝ անվճար ծառայությունների հասցեականության առավել հստակությունը և վճարովի ծառայություններից օգտվելու կարողությունների աճը:

Աղքատության չափման հիմնական (պաշտոնական) մոտեցումը Հայաստանում համարվում է 2019թ.-ի մեթոդաբանությունից բխող **բացարձակ**՝ ըստ սպառման, աղքատությունը: Նշված համատեքստում, համաձայն Համաշխարհային բանկի սահմանման, **բացարձակ աղքատությունը**՝ տնային տնտեսությունների որոշակի կենսամակարդակի ընդունելի նվազագույնի ապահովման անկարողությունն է: Այս գլխում ներկայացվում է նաև հարաբերական աղքատությունը, միջազգային աղքատության մակարդակը տարածաշրջանի երկրներում, բազմաչափ աղքատությունը, սոցիալական բացառումները, աղքատությունը գյուղական վայրերում և մանկական աղքատությունը:

Հայաստանում բարեկեցության մակարդակը գնահատելու համար օգտագործվում է **սպառման ագրեգացված ցուցանիշը**: Միջազգային փորձից ելնելով, ընդունված է, որ սպառումը եկամտի համեմատ ավելի ճշգրիտ տեղեկատվություն է ներկայացնում բարեկեցության մակարդակի վերաբերյալ, քանզի տնային տնտեսության սպառման ագրեգատը սովորաբար ավելի ճշգրիտ տեղեկատվություն է պարունակում և այդքան էլ զգայուն չէ կարճատև տատանումների նկատմամբ, քան եկամտի ցուցանիշը, հատկապես ցածր և միջին եկամուտներ ունեցող երկրներում: Եկամուտների մասին տեղեկատվությունը պակաս վստահելի է, քանի որ եկամուտները հաճախ թաքցվում կամ ավելի պակաս են նշվում հարցվողների կողմից, ինչպես նաև, եկամուտների որոշ տեսակների բնորոշ է սեզոնայնության նշանակալիությունը:

Սպառման ագրեգացված ցուցանիշը ներառում է հետևյալ բաղկացուցիչները. (ա) սպառված պարենային և ոչ պարենային ապրանքների արժեքը, ներառյալ սեփական արտադրության ապրանքները, մարդասիրական կազմակերպություններից և այլ աղբյուրներից ստացված օգնությունը և (բ) երկարատև օգտագործման ապրանքների հաշվարկային արժեքը:

Հայաստանում նյութական աղքատությունը գնահատելու համար օգտագործվում է **բացարձակ աղքատության հայեցակարգը**: Հայաստանի բնակչությունն, ըստ աղքատության կարգավիճակի, բաժանվում է աղքատ և ոչ աղքատ տնային տնտեսությունների: Աղքատներն իրենց հերթին ներառում են՝ **չափավոր¹ (շատ) աղքատներ** և նրանց թվում՝ **ծայրահեղ աղքատներ**:


Աղքատությունը Հայաստանում գնահատվում է 1996թ.-ից սկսած: 2019թ.-ից Հայաստանում օգտագործվում է Համաշխարհային բանկի վերանայված՝ թվով չորրորդ մեթոդաբանությունը:

Ըստ վերին զծի աղքատ են գնահատվել նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության վերին զծից, **չափավոր (կամ շատ) աղքատ** են գնահատվել նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության ստորին զծից, **ծայրահեղ աղքատ** կամ թերսնված գնահատվել են նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության պարենային զծից, իսկ **աղքատ** են գնահատվել նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության միջին զծից՝ ինչն աղքատության ստորին և վերին զծերի միջինն է:

Ստորև բերված զծապատկերը ցույց է տալիս 2019թ.-ի մեթոդաբանությունից բխող չորս աղքատության զծերը՝ 2019 թվականի գներով:

¹ Այսուհետ «շատ աղքատներ» տերմինը փոխարինվել է «չափավոր աղքատներ»-ով:

Գծապատկեր 2.1. Հայաստան. Աղքատության մակարդակը և աղքատության գծերը 2019թ.-ին*



Աղբյուր. SSԿԱՀ 2019

*(հաշվարկված է ըստ աղքատության միջին գծի)

Չնայած, որ աղքատությունը գնահատելու համար ավելի հաճախ օգտագործվող ցուցանիշն աղքատության մակարդակն է, այն հաշվի չի առնում աղքատության ինտենսիվությունը կամ, ինչպես հաճախ անվանում են, աղքատության ճեղքվածքը, որը ցույց է տալիս, թե որքանով են աղքատ տնային տնտեսությունները ցածր աղքատության գծից:

Աղքատության խորությունը հաշվարկվում է աղքատ բնակչության հաշվով և ցույց է տալիս **աղքատության պակասությունը**, այսինքն՝ թե որքանով է աղքատների միջին եկամուտը¹ (կամ սպառումը) ցածր աղքատության գծից: Աղքատության խորության (2019թ.-ի համար՝ 10.1%) գնահատականը նաև ցույց է տալիս, որ եթե երկիրը հնարավորություն ունենար յուրաքանչյուր անհատի հաշվով (և աղքատ, և ոչ աղքատ) մոբիլիզացնելու աղքատության գծի 10.1%-ին համարժեք ռեսուրսներ, և եթե այդ ռեսուրսները հատկացվեին միայն աղքատ տնային տնտեսություններին, ապա աղքատությունը տեսականորեն կվերանար, ենթադրելով, որ աղքատներին ուղղված աջակցությունն ամբողջությամբ հատկացվում է աղքատներին:

Աղքատության սրությունը արտացոլում է աղքատների միջև եղած սպառման անհավասարությունը: Այն արտացոլում է այն փաստը, որ որոշ աղքատների սպառումը շատ է հեռու աղքատության գծից, իսկ որոշ աղքատներինը՝ շատ մոտ: 2019թ.-ին աղքատության սրությունը եղել է 3.4%:

2019թ.-ին աղքատության վերին, ստորին և ծայրահեղ աղքատության գծերը, ինչպես նաև աղքատության միջին գիծը, արտահայտված մեկ չափահաս անձի հաշվով, մեկ ամսվա համար գնահատվել են՝ համապատասխանաբար, 53 043 դրամ (կամ 110.3 ԱՄՆ դոլար), 35 054 դրամ (կամ 72.9 ԱՄՆ դոլար), 23 763 դրամ (կամ 49.4 ԱՄՆ դոլար) և 44 048 դրամ (կամ 91.7 ԱՄՆ դոլար):

¹ Հայաստանի դեպքում՝ սպառումը:

2.2. Աղքատությունն ըստ բնակավայրերի

Ստորև բերված Աղյուսակը ցույց է տալիս 2019թ.-ին աղքատության մակարդակի տարբերությունն ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի:

Աղյուսակ 2.1. Հայաստան. Աղքատության հիմնական ցուցանիշները 2019թ.-ին

(տոկոսներով)

	2019թ.				
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ը աղքատ բնակչության մեջ	Աղքատության խորություն	Աղքատության սրություն
Քաղաքային բնակավայրեր	1.1	22.2	61.8	8.4	2.7
Ք. Երևան	1.1	14.1	32.1	5.4	1.7
Այլ քաղաքներ	1.1	31.1	29.7	11.7	3.9
Գյուղական բնակավայրեր	2.0	33.2	38.2	12.8	4.4
Ընդամենը	1.4	26.4	100.0	10.1	3.4

Աղբյուրը: *SSԿԱՀ 2019թ.*

Աղյուսակ 2.2. Աղքատության մակարդակի ցուցանիշների դինամիկան, 2009-2019թթ. *

(ըստ 2009թ. և 2019թ.* մեթոդաբանության)

(տոկոսներով)

Տարի	Ոչ աղքատ բնակչություն	Աղքատ(վերին գծ)	Այդ թվում՝ չափավոր աղքատ բնակչություն	
			Այդ թվում՝ ծայրահեղ աղքատ բնակչություն	
2009թ.	65.9	34.1	20.1	3.6
2010թ.	64.2	35.8	21.3	3.0
2011թ.	65.0	35.0	19.9	3.7
2012թ.	67.6	32.4	13.5	2.8
2013թ.	68.0	32.0	13.3	2.7
2014թ.	70.0	30.0	10.9	2.3
2015թ.	70.2	29.8	10.4	2.0
2016թ.	70.6	29.4	9.8	1.8
2017թ.	74.3	25.7	10.6	1.4
2018թ.	76.5	23.5	10.6	1.0
2019թ.*	56.2	43.8	10.2	1.4

Աղբյուրը. *SSԿԱՀ 2009-2019թթ*

* 2019թ. ցուցանիշները հաշվարկվել են *SSԿԱՀ 2019-ի հիման վրա վերանայված աղքատության գնահատման մեթոդաբանությամբ*

2009-2019թթ. ընթացքում աղքատության վերին գծի համեմատ աղքատության մակարդակը Հայաստանում նվազել է 31%-ով՝ 34.1%-ից մինչև 23.5%, իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը նվազել է 72%-ով (կամ 2.8 անգամ), 3.6%-ից մինչև 1.0%: 2019 թվականին աղքատության (ըստ վերին

գծի) գնահատված ցուցանիշը* կազմում էր բնակչության 43.8%-ը: Աղքատության միտման փոփոխությունը հիմնականում պայմանավորված է ՏՏԿԱՀ 2019-ում ներդրված մեթոդաբանությամբ և տվյալների հավաքման գործընթացով (տե՛ս մեթոդական պարզաբանումները)¹: Եթե մեթոդաբանությունը չփոխվեր և աղքատության հին գծերը պարզապես թարմացվեին սպառողական գների ինդեքսի (ՄԳԻ) փոփոխություններով, ապա 2019թ.-ին աղքատության մակարդակը կկազմեր 24.9%, ինչը մի փոքր աճ էր նախորդ տարվա համեմատ:

Նմանապես, եթե նախորդ տարիների աղքատության մակարդակները հաշվարկված լիներ 2019 թ.-ի մեթոդաբանությամբ, աղքատության մակարդակները շատ ավելի տարբեր կլիներ: Ստորև ներկայացված Աղյուսակ 2.3-ը ցույց է տալիս 2017-2019 թվականների աղքատության մակարդակը՝ օգտագործելով նորացված մեթոդաբանությունը: Կիրառելով 2019-ի նորացված մեթոդը, 2019-ին աղքատության մակարդակը (ըստ վերին գծի) մի փոքր կնվազեր՝ 2017-ի 47.5%-ից և 2018-ին՝ 45.4%-ից (մանրամասների համար տե՛ս մեթոդական պարզաբանումները):

Աղյուսակ 2.3. Աղքատության մակարդակի ցուցանիշների դինամիկան, 2017-2019թթ.*
(ըստ 2019թ. վերանայված մեթոդաբանության)

(տոկոսներով)

Տարի	Ոչ աղքատ բնակչություն	Աղքատ (վերին գծ)			
		Այդ թվում՝ չափավոր աղքատ բնակչություն			
		Այդ թվում՝ ծայրահեղ աղքատ բնակչություն			
2017թ.	52.5	47.5	11.0	1.4	
2018թ.	54.6	45.4	11.2	1.0	
2019թ.	56.2	43.8	10.2	1.4	

Աղբյուր. ՏՏԿԱՀ 2017-2019

* Ցուցանիշները հաշվարկվել են ՏՏԿԱՀ 2019-ի հիման վրա վերանայված աղքատության գնահատման մեթոդաբանությամբ:

Աղքատության ցուցանիշները հաշվարկելու համար օգտագործվող աղքատության գծերը բերված են Աղյուսակ 2.4-ում: Հաշվի առնելով 2018թ.-ի գնաճը նախորդ տարվա համեմատ՝ ճշգրտվել են 2018թ.-ի աղքատության գծերը՝ ընթացիկ գներով հաշվարկված սպառման ագրեգատի հետ համեմատություն անցկացնելու նպատակով: 2018թ.-ին աղքատության գիծը հաշվարկվել է՝ օգտագործելով 2009թ.-ին փաստագրված (էմպիրիկ եղանակով ստացված) նվազագույն պարենային զամբյուղը և գնահատված ոչ պարենային ապրանքների մասնաբաժինը (տե՛ս՝ Մեթոդաբանական պարզաբանումները):

Աղքատության մակարդակի հաշվարկման ժամանակ օգտագործված աղքատության գծերը բերված են Աղյուսակ 2.4-ում: Հաշվի առնելով տարեկան գնաճը՝ աղքատության գծերը 2009-2018թթ. ճշգրտվել են՝ հնարավորություն տալով համեմատել ընթացիկ գներում հաշվարկված սպառման ագրեգատի հետ: Այնուամենայնիվ, 2019թ.-ի համար աղքատության նոր գծերը հաշվարկվում են ՏՏԿԱՀ 2019թ.-ի նորացված մեթոդաբանությամբ և տվյալներով: 2019թ.-ի աղքատության գծերի արժեքները հաշվարկվում են ըստ փաստացի (կամ էմպիրիկորեն որոշված) պարենային նվազագույն զամբյուղի և ոչ պարենային ապրանքների գնահատված մասնաբաժնի՝ ապրանքներ 2019թ.-ի համար (տե՛ս մեթոդական պարզաբանումները): 2019թ.-ի վերահաշվարկված սպառման զամբյուղը և

¹ 2009 թվականից մինչև 2018 թվականը ՀՀ-ում աղքատության մակարդակի գնահատումը հիմնված էր աղքատության գծի տարեկան թարմացմամբ, որը հաշվարկվել է ՏՏԿԱՀ 2009-ի տվյալների հիման վրա՝ տնտեսության գների մակարդակի փոփոխությունների վերաբերյալ՝ օգտագործելով սպառողական գների ինդեքսը (ՄԳԻ):

աղքատության գծերը արտացոլում են փոփոխություններ, ինչպիսիք են սպառման օրինաչափությունները, ծախսերի սովորությունները, ժողովրդագրական կառուցվածքը հասարակության մեջ: Հետևաբար, աղքատության վերին գիծը՝ 53 043 դրամ 2019թ.-ին, շատ ավելի բարձր է և համեմատելի չէ 2018-ի և նախորդ տարիների հետ: Եթե 2019թ.-ին աղքատության հին գծերը պարզապես ճշգրտված լինեին ՍԳԻ-ի կողմից, ապա աղքատության վերին գիծը կկազմեր 43 289 ՀՀ դրամ:

Աղյուսակ 2.4. Հայաստան. Անվանական աղքատության գծերը և դրանց փոփոխությունը, 2009-2018թթ. և 2019թ.*
(մեկ չափահաս անձի հաշվով, մեկ ամսվա համար)

(դրամ)

	Աղքատության գծերը		
	Աղքատության պարենային կամ ծայրահեղ գիծ	Աղքատության ստորին գիծ	Աղքատության վերին գիծ
2009թ.	17 483	25 217	30 920
2010թ.	19 126	27 410	33 517
2011թ.	21 306	29 856	36 158
2012թ.	21 732	30 547	37 044
2013թ.	22 993	32 318	39 193
2014թ.	23 384	33 101	40 264
2015թ.	24 109	34 234	41 698
2016թ.	23 313	33 418	40 867
2017թ.	24 269	34 253	41 612
2018թ.	24 827	35 071	42 621
2019թ.*	23 763	35 054	53 043

Աղբյուր. *ԱՐՄՄՍՍՍ*

* 2019թ. ցուցանիշները հաշվարկվել են *ՏՏԿԱՀ* 2019թ.-ի հիման վրա վերանայված աղքատության գնահատման մեթոդաբանությամբ

Բացի այդ, 2019թ.-ի համար հաշվարկվել է աղքատության միջին գիծ, որը ստորին և վերին աղքատության գծերի միջինն է: Ելնելով աղքատության միջին գծից՝ աղքատության մակարդակը կազմել է բնակչության 26.4%-ը:

Աղյուսակ 2.5-ում ներկայացված են 2019թ.-ի աղքատության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի և ք. Երևանի, հաշվարկված ըստ աղքատության միջին գծի:

Աղյուսակ 2.5. Հայաստան. Աղքատության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի և ք. Երևանի, 2019թ.¹

(տոկոսներով)

	2019թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատների մեջ	%-ն ընդհանուր բնակչության մեջ
ք.Երևան	1.1	14.1	17.1	32.1
Արագածոտն	7.7	51.4	8.5	4.4
Արարատ	0.5	29.4	10.5	9.5
Արմավիր	1.2	22.5	8.2	9.6
Գեղարքունիք	3.4	43.5	11.2	6.8
Լոռի	1.5	30.1	10.4	9.1
Կոտայք	0.6	31.9	12.0	9.9
Շիրակ	1.7	48.4	14.3	7.8
Սյունիք	0.0	12.1	1.9	4.3
Վայոց Ձոր	0.0	19.3	1.4	1.9
Տավուշ	0.6	25.6	4.5	4.6
Ընդամենը	1.4	26.4	100	100

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019թ.

¹ Ըստ մարզերի և ք. Երևանի 2019թ. աղքատության ցուցանիշները ևս համադրելի չեն նախորդ տարիների տվյալների հետ, քանզի հաշվարկված են ըստ աղքատության միջին գծի:

2.3. Աղքատության կառուցվածքային պատկերը 2019թ.-ին

Աղյուսակ 2.6. Հայաստան. Աղքատության ցուցանիշներն ըստ սեռի և տարիքային խմբերի, 2019 թ.-ին

(տոկոսներով)

Սեռը և տարիքային խմբերը	2019թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատ բնակչության մեջ	%-ն ընդհանուր բնակչության մեջ
Սեռը				
Կանայք	1.6	26.0	54.1	54.7
Տղամարդիկ	1.3	26.5	45.9	45.3
Տարիքային խմբեր				
Երեխաներ 0-5	3.3	34.7	10.1	7.7
6-9 տարեկան	1.9	33.4	7.1	5.6
10-14	2.1	31.8	8.2	6.8
15-17	0.9	34.9	4.3	3.2
18-19	1.9	24.1	1.4	1.5
20-24	0.6	22.2	4.9	5.8
25-29	1.9	28.2	7.8	7.3
30-34	1.7	27.5	7.9	7.6
35-39	1.4	29.4	7.7	6.9
40-44	1.0	24.2	5.1	5.5
45-49	2.1	23.1	4.6	5.3
50-54	1.1	23.8	5.3	5.9
55-59	1.0	23.6	6.8	7.6
60-64	0.8	22.1	6.2	7.4
65+	0.8	21.2	12.6	15.7
Ընդամենը	1.4	26.4	100.0	100.0

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019թ.

Աղյուսակ 2.7. Հայաստան. Աղքատության մակարդակն ըստ տնային տնտեսության չափի, 2019թ.-ին

(տոկոսներով)

Տնային տնտեսության անդամների թվաքանակը	2019թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատ բնակչության մեջ	%-ն ընդհանուր բնակչության մեջ
1	0.2	7.3	1.3	5.0
2	0.1	13.6	6.5	12.6
3	1.2	20.6	12.0	15.0
4	0.8	21.2	17.9	20.4
5	1.0	28.6	21.1	19.2
6	0.8	35.5	20.8	14.9
7 և ավելի	5.1	41.1	20.3	12.9
Ընդամենը	1.4	26.4	100.0	100.0

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019թ.

Աղյուսակ 2.8. Հայաստան. Աղքատության մակարդակն ըստ առկա երեխաների (մինչև 6 տարեկան) և տարեցների (60-ից բարձր տարիք) թվաքանակի, 2019թ.-ին

(տոկոսներով)

Առկա երեխաների և տարեցների թվաքանակը	2019թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատ բնակչության մեջ	%-ն ընդհանուր բնակչության մեջ
Երեխաների թվաքանակը				
0 երեխա	0.5	18.6	57.3	68.0
1 երեխա	0.7	26.7	25.9	22.0
2 երեխա	1.4	30.1	14.7	8.5
3 երեխա և ավելի	5.9	45.8	2.1	1.5
Տարեցների թվաքանակը				
0 տարեց	1.5	26.0	47.3	48.0
1 տարեց	1.6	26.8	33.5	33.0
2 տարեց և ավելի	1.0	26.8	19.2	19.0
Ընդամենը	1.4	26.4	100.0	100.0

Աղբյուրը. *SSYUL 2019թ.*

Աղյուսակ 2.9. Հայաստան. Աղքատության ցուցանիշներն ըստ տնային տնտեսության կազմի, 2019թ.-ին

(տոկոսներով)

Տնային տնտեսության կազմը*	2019թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատ բնակչության մեջ	%-ն ընդհանուր բնակչության մեջ
1 չափահաս՝ առանց երեխա	0.0	18.5	2.1	3.0
2 չափահաս, առանց երեխա	1.1	21.0	9.3	11.8
2 չափահաս, 2 երեխա	4.8	33.0	1.6	1.3
Տարեցներ առանց երեխա, առանց չափահասի	0.3	12.6	4.1	8.7
3 չափահաս	1.2	26.2	21.1	21.3
4 չափահաս	1.6	30.4	18.9	16.4
Այլ	1.8	29.3	42.9	37.5
Ընդամենը	1.4	26.4	100.0	100.0

Աղբյուրը: *SSYUL 2019թ.*

Նշում * չափահաս՝ 18 և բարձր տարիքի, երեխա՝ մինչև 6 տարեկան, տարեց՝ 60 տարեկանից բարձր:

**Աղյուսակ 2.10. Հայաստան. Աղքատության ցուցանիշներն ըստ տնային տնտեսության
գլխավորի սեռի, 2019թ.-ին**


(տոկոսներով)

Գլխավորի սեռը	2019թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատ բնակչության մեջ	%-ն ընդհանուր բնակչության մեջ
Տղամարդ՝ գլխավոր	1.1	26.6	72.9	72.5
Կին՝ գլխավոր, այդ թվում՝	2.3	26.1	27.1	27.5
Կին գլխավոր՝ առանց մինչև 6 տարեկան երեխայի	0.8	22.8	17.1	19.8
Կին գլխավոր՝ մինչև 6 տարեկան երեխաներով	6.0	34.8	9.9	7.6
Ընդամենը	1.4	26.4	100.0	100.0

Աղբյուրը: *SSԿԱՀ 2019թ.*

**Գծապատկեր 2.3. Հայաստան. Աղքատության ցուցանիշներն ըստ տնային տնտեսության
գլխավորի սեռի, ըստ առկա բնակչության, 2019թ.-ին**

(տոկոսներով)



Աղբյուրը: *SSԿԱՀ 2019թ.*

Աղյուսակ 2.11. Հայաստան. Աղքատությունն ըստ կրթության մակարդակի, 2019թ. (16 և բարձր տարիքի բնակչություն)


(տոկոսներով)

Կրթության մակարդակը	2019թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատների մեջ (համեմատվող բնակչություն)	%-ը համեմատվող բնակչության մեջ
Տարրական և ցածր	4.3	33.2	2.1	1.6
Թերի միջնակարգ	2.6	37.4	14.4	9.5
Միջնակարգ ընդհանուր	1.3	29.9	52.4	43.0
Միջնակարգ մասնագիտական	1.2	21.0	19.9	23.3
Բարձրագույն	0.1	12.1	11.2	22.7
Ընդամենը	1.2	24.5	100	100

Աղբյուրը՝ *SSYUL 2019թ*

Գծապատկեր 2.4. Հայաստան. Աղքատությունն ըստ կրթության մակարդակի, 2019թ. (16 և բարձր տարիքի բնակչություն)

(տոկոսներով)



Աղբյուրը: *SSYUL 2019թ*

Աղքատության վրա ազդող կարևորագույն գործոններից է մասնակցությունն աշխատանքի շուկայում: Հատկապես աշխատանքի բացակայության պարագայում մեծանում է աղքատ կամ ծայրահեղ աղքատ լինելու հավանականությունը (Աղյուսակ 2.12)

Աղյուսակ 2.12. Հայաստան. Աղքատության մակարդակն ըստ տնային տնտեսությունում զբաղված անդամների թվաքանակի, 2019թ. (15 -75 տարիքի բնակչություն)

(տոկոսներով)

Տնային տնտեսությունում զբաղված անդամների թվաքանակը	2019թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ով 15-75 տարեկան աղքատների մեջ	%-ով 15-75 տարեկան բնակչության մեջ
Ոչ ոք զբաղված չէ	3.3	27.9	14.0	12.4
Զբաղված է մեկ անդամ	0.8	23.8	24.0	25.0
Զբաղված է 2 անդամ	0.5	24.8	33.8	33.8
Զբաղված է 3 և ավելի անդամ	1.4	24.2	28.2	28.8
Ընդամենը	1.2	24.7	100	100

Աղբյուրը: *SSGUL 2019թ.*

Աշխատանքն ապահովում է եկամուտ, հետևաբար և աղքատության ավելի ցածր մակարդակ: Այդ են վկայում հետազոտության արդյունքները, համաձայն որի, աղքատների մեծ մասը չի ունեցել աշխատանք, մինչդեռ ոչ աղքատների զգալի մասը զբաղված է եղել որևէ տեսակի տնտեսական գործունեությամբ:

Աղյուսակ 2.13. Հայաստան. Աշխատուժի մասնակցությունն ու աղքատությունը, 2019թ (15 -75 տարեկան բնակչություն)

(տոկոսներով)

Աշխատուժի մասնակցությունը	2019թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ով 15-75 տարեկան աղքատների մեջ	%-ով 15-75 տարեկան բնակչության մեջ
Ընդամենը բնակչություն				
<i>Տնտեսապես ակտիվ</i>	1.1	23.6	62.9	65.8
Զբաղվածներ	0.8	22.1	52.5	58.7
Վարձու աշխատողներ	0.7	18.8	27.0	35.5
Ինքնազբաղվածներ	0.8	27.4	21.5	19.4
Այլ զբաղվածներ	1.0	25.9	4.8	4.6
Գործազուրկներ	3.9	37.6	9.6	6.3
<i>Տնտեսապես ոչ ակտիվ</i>	1.3	26.9	37.1	34.2
Կենսաթոշակառուներ	0.8	20.3	7.5	9.1
Ուսանողներ	0.3	24.9	6.1	6.0
Այլ տնտեսապես ոչ ակտիվ	1.8	30.6	23.6	19.0
ք. Երևան				
<i>Տնտեսապես ակտիվ</i>	0.8	12.2	58.3	62.4
Զբաղվածներ	0.4	10.8	45.1	54.6
Վարձու աշխատողներ	0.4	10.6	36.8	45.4
Ինքնազբաղվածներ	0.0	12.1	8.5	9.2
Այլ զբաղվածներ	0.0	0.0	0.0	0.4
Գործազուրկներ	4.4	23.0	13.0	7.4
<i>Տնտեսապես ոչ ակտիվ</i>	0.8	14.5	23.9	37.6
Կենսաթոշակառուներ	0.7	16.4	15.0	12.0

Աշխատուժի մասնակցությունը	2019թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ով 15-75 տարեկան աղքատների մեջ	%-ով 15-75 տարեկան բնակչության մեջ
Ուսանողներ	0.0	5.9	2.8	6.2
Այլ տնտեսապես ոչ ակտիվ	1.1	16.2	41.7	19.4
Այլ քաղաքներ				
<i>Տնտեսապես ակտիվ</i>	0.9	27.9	55.7	58.3
Զբաղվածներ	0.7	25.3	42.4	49.2
Վարձու աշխատողներ	0.9	25.7	34.5	39.2
Ինքնազբաղվածներ	0.0	24.2	7.9	9.6
Այլ զբաղվածներ	0.0	21.2	0.9	1.3
Գործազուրկներ	2.3	43.4	12.4	8.3
<i>Տնտեսապես ոչ ակտիվ</i>	1.1	31.0	44.3	41.7
Կենսաթոշակատուներ	0.8	22.1	10.1	13.3
Ուսանողներ	0.6	33.4	6.8	5.9
Այլ տնտեսապես ոչ ակտիվ	1.4	35.6	27.4	22.4
Գյուղական բնակավայրեր				
<i>Տնտեսապես ակտիվ</i>	1.3	29.5	69.7	74.7
Զբաղվածներ	1.1	28.3	62.4	69.5
Վարձու աշխատողներ	1.0	23.9	18.0	23.9
Ինքնազբաղվածներ	1.2	31.5	35.9	36.1
Այլ զբաղվածներ	1.1	27.0	9.3	10.9
Գործազուրկներ	6.0	53.2	6.4	3.8
<i>Տնտեսապես ոչ ակտիվ</i>	2.2	37.9	30.3	25.3
Կենսաթոշակատուներ	1.1	27.6	2.8	3.2
Ուսանողներ	0.3	36.2	6.8	6.0
Այլ տնտեսապես ոչ ակտիվ	3.2	40.6	20.7	16.1
Ընդամենը	1.2	24.7	100.0	100.0

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019թ.

Նշում: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից պակաս ճկշոված դեպքերի վրա:


2.4. Սպառումը, եկամուտը և դրանց բաշխվածության անհավասարությունը

Դիտարկվող ժամանակահատվածում (2008-2019թթ.), ըստ ամբողջական եկամուտների ցուցանիշի ողջ բնակչության համար անհավասարությունն աճել է, իսկ ըստ սպառման ագրեգատի՝ նվազել: Ջինիի գործակցի միջոցով գնահատված անհավասարության ցուցանիշները վկայում են, որ Հայաստանում բնակչության բնեռացումն ըստ եկամուտների ցուցանիշի ավելի խորն է սպառման ագրեգատի ցուցանիշի համեմատ:

Աղյուսակ 2.14. Հայաստան. Սպառման ագրեգատի և եկամուտների անհավասարությունը, 2008, 2018- 2019 թթ.-ին

	Սպառում			Եկամուտ		
	2008	2018	2019	2008	2018	2019
Ջինիի գործակից	0.242	0.298	0.279	0.339	0.360	0.381

Գծապատկեր 2.5. Հայաստան. Սպառման ագրեգատի և եկամուտների անհավասարությունը, 2008, 2018- 2019 թթ.-ին



Աղբյուրը. *SSCULՀ 2008, 2018- 2019թթ.*

2.5. Հարաբերական աղքատությունը


Ինչպես ներկայացված է բաժին 2.1-ում, Հայաստանում աղքատությունը գնահատելու համար սպառման ագրեգատը համեմատվում է աղքատության միջին գծի հետ: Այս մեթոդաբանությամբ աղքատության գիծը հաշվարկվում է հիմնական կարիքները բավարարելու համար անհրաժեշտ սպառման արժեքի հիման վրա, ընդ որում աղքատ են համարվում սահմանված բացարձակ շեմից ցածր գտնվող տնային տնտեսությունները:

Ի հակադրություն այս մոտեցման, հարաբերական աղքատության հաշվարկն առնչվում է սոցիալական բացառման հասկացության հետ, համաձայն որի աղքատ են համարվում եկամտի մեղիանի 60%-ից ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունները: Եվրոպական Միության երկրներում լայնորեն կիրառվող այս մեթոդաբանության հիմքում ընկած է այն գաղափարը, որ աղքատությունն ավելի շուտ բնութագրվում է ոչ թե հիմնական կարիքները բավարարելու հնարավորությամբ, այլ որոշ խմբերի՝ բնակչության ընդհանուր կենսամակարդակին զիջելու հավանականությամբ: Աղքատության հարաբերական գիծը հաշվարկվում է տնային տնտեսությունների տարեկան մեղիանի եկամտի որոշակի տոկոսային մասի տեսքով: Եվրոպական Միության երկրները հարաբերական աղքատության գիծը հաշվարկելիս սովորաբար կիրառում են եկամտի մեղիանի 60% շեմը՝ այն անվանելով «աղքատության մեջ հայտնվելու ռիսկի շեմ»:

Հարաբերական աղքատության մակարդակն արտացոլում է բնակչության մեջ առկա անհավասարությունը՝ շեշտը դնելով աղքատ և սոցիալապես խոցելի բնակչության վրա: Ընդհանուր առմամբ, հարաբերական աղքատության աճը սովորաբար բնութագրական է այնպիսի իրավիճակի համար, երբ բնակչության աղքատ խմբերի եկամուտների աճի տեմպը զիջում է միջին խմբերի եկամուտների աճի տեմպին: Հարաբերական աղքատություն հասկացությունը հաճախ սուր քննադատության է ենթարկվում, քանի որ հարաբերական աղքատության ցուցանիշը նվազում է նաև այն դեպքերում, երբ տեղի է ունենում ամբողջ բնակչության բացարձակ կենսամակարդակի անկում, և միջին խավերի եկամուտները նվազում են ավելի արագ տեմպով, քան աղքատների եկամուտները (ինչը Եվրոպական Միության շատ երկրներում տեղի ունեցավ համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով):

Գծապատկեր 2.6-ում ներկայացված են Հայաստանում հարաբերական աղքատության մակարդակի միտումները (կանաչ սյունակներ) և աղքատության մակարդակի հաշվարկի համար կիրառվող տնային տնտեսությունների համահավասարեցված մեդիան եկամտի ցուցանիշը (կարմիր գիծ):

Գծապատկեր 2.6. Մեդիան եկամտի 60 տոկոսով հաշվարկված հարաբերական աղքատությունը և համահավասարեցված մեդիան եկամուտը (ՀՀ դրամ, անվանական)



Աղբյուրը. *SSՀԱՀ 2008- 2019թթ.*

2.6. Աղքատության միջազգային մակարդակը Հայաստանում և համադրելի երկրներում

Աղքատության միջազգային գծի գլոբալ վերանայում

Աղքատության և համընդհանուր բարգավաճման հիմնական ցուցանիշները հաշվարկելու իր հանձնառության շրջանակներում Համաշխարհային բանկն իրականացնում է աղքատության միջազգային գնահատումներ համադրելի երկրների և ժամանակահատվածների համար: Աղքատության միջազգային գնահատման առաջնորդող սկզբունքն աշխարհում աղքատ մարդկանց թվաքանակը հաշվելն է ըստ որոշակի բացարձակ ստանդարտի՝ Համաշխարհային բանկի, ՄԱԿ-ի և զարգացման այլ գործընկերների կողմից սահմանված գլոբալ նպատակների իրագործման առաջընթացը չափելու համար: Թեև ազգային մակարդակով աղքատության գնահատումները, որոնք հաշվի են առնում սպառման տեղական առանձնահատկությունները, ավելի տեղին են տվյալ երկրի վերաբերյալ վերլուծություններ կատարելու, քաղաքականությունների շուրջ երկխոսության հիմքեր ստեղծելու կամ ամենաաղքատներին ուղղված հասցեական ծրագրեր մշակելու համար,

աղքատության միջազգային գնահատումները թույլ են տալիս աղքատության ազգային գնահատման միանգամայն տարբեր մեթոդաբանություններ կիրառող երկրների միջև համեմատություններ կատարել:

Աղքատության միջազգային գնահատականները հիմնված են աղքատության միջազգային գծի վրա և օգտակար են միջազգային համադրությունների, ինչպես նաև երկրների համար ուղենիշների սահմանման առումով: Տարբեր երկրներում գնողունակության, աղքատության ազգային գծերի և բարեկեցության ագրեգատների հաշվարկման համար օգտագործվող մեթոդական մոտեցումների տարբերությունները դժվարացնում են աղքատության ազգային գծերի օգտագործումը միջազգային համադրությունների համար՝ դրանով իսկ հիմնավորելով աղքատության միջազգային գծի անհրաժեշտությունը: Այս գիծը լրացնում է աղքատության ազգային գծերը և կարող է օգտակար լինել տվյալ երկրում աղքատության հաղթահարմանն ուղղված ջանքերի մասով իրավիճակը կամ համեմատական կատարողականը գնահատելու գործում: Այդուհանդերձ, աղքատության ազգային գծերը մնում են ներպետական երկխոսության նախընտրելի գործիք, քանի որ լավագույնս արտացոլում են տվյալ երկրի համատեքստը:

Աղքատության միջազգային գնահատականների հաշվարկի համար անհրաժեշտ է երկու գործողություն՝ աղքատության միջազգային գծի վերանայում և բարեկեցության միջազգայնորեն համադրելի ագրեգատների սահմանում: այդ նպատակի համար օգտագործվում են Համադրությունների միջազգային ծրագրի (ՀՄՕ) կողմից կատարվող գնողունակության համարժեքության (ԳՀ) հաշվարկները: ԳՀ-ները կիրառվում են աղքատության միջազգային գծերը տեղական արժույթների տեսքով արտահայտելու համար, ինչն ազդում է տարբեր երկրներում աղքատության համադրելի մակարդակների հաշվարկի վրա: Վերջերս ՀՄՕ-ն բազմաթիվ երկրների համար վերանայել է 2011թ.-ի ԳՀ-ի գործոնները: Վերանայումը հիմնականում պայմանավորված էր երկրների ցուցանիշների ընթացիկ վերանայմամբ՝ ծախսերի և ազգային հաշիվների գնահատման անհրաժեշտ նոր տեղեկություններ ներառելու նպատակով: Կատարվել են նաև այլ վերանայումներ՝ պայմանավորված գների վերաբերյալ տվյալների փոփոխությամբ: Ավելին, քանի որ ԳՀ-ները բազմակողմ համաթվեր են, մեկ երկրի ազգային հաշիվներում փոփոխությունները կարող են ազդել տարածաշրջանի համեմատելի այլ երկրների ԳՀ-ների վրա: Այս վերանայումը Հայաստանի համար նշանակալի է եղել. 2011թ.-ի գործակիցը 183.780-ից նվազել է մինչև 165 629, ինչը հանգեցրել է -9,9% փոփոխության: Ըստ այդմ, Հայաստանի վերանայված ԳՀ2011-ով մեկ հայկական դրամի գնողունակությունն ավելի բարձր է գնահատվում՝ համեմատած միջազգայնորեն համադրելի ընդհանուր արժույթի հետ:


2011թ.-ի գներով արտահայտվելու դեպքում աղքատության միջազգային գիծը համարժեք է մեկ շնչի հաշվով օրական 1.90 ԱՄՆ դոլարի: Աղքատության միջազգային գիծն ի սկզբանե հաշվարկվել է՝ հիմք ընդունելով այդ պահի դրությամբ աշխարհի շուրջ տասնհինգ ամենաաղքատ երկրներում աղքատության ազգային գծերի միջին մակարդակը¹: Աղքատության միջազգային գծից բացի, Համաշխարհային բանկն օգտագործում է ըստ եկամտի դասի աղքատության գծերը, որոնք հեշտացնում են զարգացման համանման փուլերում գտնվող երկրների միջև համեմատությունները: Ըստ եկամտի դասի աղքատության գծերը սահմանվում են միջինից ցածր և միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների համար՝ հիմնվելով յուրաքանչյուր խմբում ներառված երկրների աղքատության ազգային գծերի վրա: Այսպիսով, դրանք սահմանում են ավելի ճիշտ շեմ՝ ըստ եկամտի դասի խմբավորված երկրներում աղքատության մակարդակը գնահատելու համար: Գծերը սահմանվում են հետևյալ կերպ. ԳՀ2011-ով մեկ շնչի հաշվով օրական 3.2 ԱՄՆ դոլար՝ միջինից ցածր և մեկ շնչի

¹ ԳՀ2005-ով այն համարժեք է մեկ շնչի հաշվով օրական 1.25 ԱՄՆ դոլարի

հաշվով օրական 5.5 ԱՄՆ դոլար՝ միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների համար, իսկ բարեկեցության ազդեցատը աղքատության միջազգային գծի համար օգտագործվող ներդաշնակեցված ազդեցատն է:

Բարեկեցության միջազգայնորեն համադրելի ազդեցատներ սահմանելու նպատակով Համաշխարհային բանկը ներդաշնակեցնում է տնային տնտեսությունների տեղական հարցումների միջոցով հավաքված տեղեկությունները՝ երկրների համադրելիությունն առավելագույնի հասցնելու և բարեկեցության ընդհանուր ազդեցատ սահմանելու համար: Բարեկեցության ազդեցատները նույնպես վերանայվում են՝ յուրաքանչյուր երկրի մասով ստացված նոր ԳՀ գործոնը կիրառելու միջոցով, որպեսզի բոլորն արտահայտվեն գնողունակության նույն չափանիշով: Բարեկեցության այս ազդեցատների հիման վրա Համաշխարհային բանկը երկրների համար իրականացնում է աղքատության մակարդակի միջազգայնորեն համադրելի գնահատումներ՝ կիրառելով աղքատության միջազգային և ըստ եկամտի դասի գծերը: Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի երկրների համար Համաշխարհային բանկն օգտագործում է աղքատության միջազգային գիծը և ԳՀ2011-ով աղքատության գծերը՝ օրական 3.2 ԱՄՆ դոլարի և 5.5 ԱՄՆ դոլարի հաշվարկով: Արդյունքները ներկայացված են Գծապատկեր 2.7-ում:

Գծապատկեր 2.7. Աղքատության միջազգայնորեն համադրելի գծերը, ըստ ԱՄՆ դոլարի գնողունակության համարժեքության, 2002-2019թթ. ժամանակահատվածի որոշ տարիների կտրվածքով




Աղբյուրը. PovcalNet-ի և ECAPOV-ի հաշվարկներ

Նշում. Հասանելի վերջին տվյալները. Հայաստան (2019թ.), Վրաստան (2018թ.), Ղրղզստան (2018թ.), Ռումինիա (2016թ.), Ռուսաստան (2018թ.), Մերքիա (2018թ.), Թուրքիա (2018թ.), Ուկրաինա (2018թ.), Եվրոպա և Կենտրոնական Ասիա (2015թ.), Միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներ (2015թ.):

Գծապատկերներ 2.8-ը և 2.9-ը ցույց են տալիս աղքատության մակարդակի փոփոխության միտումներն ըստ աղքատության միջազգային գծի, ինչպես նաև ըստ միջինից ցածր և միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների դասերի համար հաշվարկված աղքատության գծերի՝ կիրառելով 2011թ.-ի ՀՄԾ-ի փոփոխությունները: Ըստ աղքատության միջազգային գծի (օրական մեկ շնչի հաշվով 1.90 ԱՄՆ դոլար) աղքատության մակարդակը 2001թ.-ից ի վեր կտրուկ անկում է ապրել և մնում է շատ ցածր մակարդակի վրա՝ 2019թ.-ին կազմելով 1.2 տոկոս: Ըստ միջինից ցածր եկամուտներ ունեցող երկրների դասում աղքատության գծի (օրական մեկ շնչի հաշվով 3.20 ԱՄՆ դոլար) աղքատության մակարդակը վերջին տարիների ընթացքում կարծես թե համահարթեցման միտում է դրսևորում: Ըստ միջինից բարձր եկամուտներ ունեցող երկրների դասում աղքատության գծի (օրական մեկ շնչի հաշվով 5.50 ԱՄՆ դոլար) աղքատության մակարդակը 2019թ.-ն շարունակում է մնալ հիմնականում անփոփոխ¹:

Գծապատկեր 2.8. Հայաստանում աղքատության մակարդակի փոփոխության միտումները, ըստ աղքատության միջազգային գծի




Աղբյուր. SSՀԱՀ 2001-2019

Նշում. Աղքատության ցուցանիշները հաշվարկվել են ՀՄԾ-ի կողմից վերանայված ԳՀ 2011-ի կիրառությամբ: Նախորդ տարիների ցուցանիշները ԳՀ 2011-ի վերնայմանը համապատասխան վերահաշվարկվել են:

¹ Աղքատության մակարդակի փոփոխության միտումները ԳՀ2005-ի և ԳՀ2011-ի ժամանակային շարքերի առումով կայուն են:

Գծապատկեր 2.9. Հայաստանում աղքատության մակարդակի փոփոխության միտումները, ըստ միջին եկամուտ ունեցող երկրների դասում աղքատության միջազգային գծի



Աղբյուր. *SS4ԱՀ 2001-2019*

Նշում. Աղքատության ցուցանիշները հաշվարկվել են ՀՄԾ-ի կողմից վերանայված ԳՀ 2011-ի կիրառությամբ: Նախորդ տարիների ցուցանիշները ԳՀ 2011-ի վերնայմանը համապատասխան վերահաշվարկվել են:

2.7. Բազմաչափ աղքատությունը Հայաստանում¹

Մինչ այժմ աղքատությունը ներկայացվել է բարեկեցության բաղկացուցիչներից զրկվածության, առանցքային կարողությունների բացակայության և հիմնական կարիքների բավարարման համար անհրաժեշտ «տնտեսական միջոցների սակավության» տեսանկյունից: Բազմաչափ աղքատության ցուցանիշը գնահատում է աղքատության բազմակողմությունը, խորությունն ու տևականությունը և տալիս դրամային (ըստ սպառման ցուցանիշի) աղքատության վերլուծությունը լրացնող կարևոր տեղեկություններ: Բազմաչափ աղքատության ազգային գնահատման նախաձեռնությանը Հայաստանում սկիզբ է դրվել 2016թ.-ն՝ ՀՀ Վիճակագրական կոմիտեի (ԱՐՄՍՏՍՏ) կողմից, որի շրջանակներում 2017թ.-ն հրապարակվել է աշխատանքային փաստաթուղթ, և գործարկվել է առցանց ինտերակտիվ վահանակ (Մարտիրոսովա և այլք, 2017թ.)²:

Դրամային աղքատությունն ինքնին բազմաչափ է, սակայն բարեկեցության բոլոր տեսանկյունները չի նկարագրում: Ըստ սահմանման, պատշաճ առողջապահությունը և համարժեք կրթությունը աղքատության չափումներ են, որոնք դրամային աղքատության ցուցանիշով լիարժեքորեն չեն գնահատվում: Տնային տնտեսության ծախսերը կարող են այս երկու չափումների մասին մասնակի պատկերացում տալ, սակայն հանրային ծառայությունների արժեքը գնահատելը

¹ Այս ենթաբաժինը կազմվել է Վիճակագրական կոմիտեի և Համաշխարհային բանկի համատեղ ջանքերով:

² Դիանա Մարտիրոսովա, Օսման Քան Բնան, Մորից Մեյեր, Նիստա Մինհա, 2017թ. «Ընչազրկության բազում դեմքերը. Հայաստանում աղքատության գնահատման բազմաչափ մոտեցումը», Աղքատության և արդարության գլոբալ պրակտիկայի աշխատանքային փաստաթղթերի շարք, թիվ 117, Վաշինգտոն, Համաշխարհային բանկի խումբ:

դժվար խնդիր է: Բացի այդ, առողջապահությունը և կրթությունը հավելյալ նշանակություն ունեն, որը կարող է չարտացոլվել սպառված ապրանքների արժեքում: Նույն կերպ, աշխատանքով ապահովված լինելը յուրահատուկ նշանակություն ունի, որն ավելին է, քան աշխատավարձի տեսքով վաստակած գումարը. այն որոշակի բաների հասած լինելու, հանրությանը և հասարակությանը պատկանելու զգացում է տալիս: Պատշաճ և մատչելի բնակարան ունենալը, այն ջեռուցմամբ ապահովելը կարևոր է ոչ միայն կենսամակարդակի, այլ մարդու ինքնագնահատականի տեսանկյունից: Քաղաքականության առումով, զրկանքները՝ որպես մարդկային զարգացման տարբեր ոլորտներում կարողությունների բացեր, ժամանակի ընթացքում հաճախ տևական բնույթ են կրում, ուստի կարող են բացասաբար անդրադառնալ տնային տնտեսության՝ ապագայում աղքատությունից և խոցելիությունից խուսափելու ունակության վրա: Ըստ այդմ, բազմաչափ աղքատությունը բնութագրող զրկանքների ուսումնասիրությունը դրամային աղքատության վերլուծությունը լրացնում է ոչ դրամային տեսքով արտահայտված տեղեկատվությամբ:

Բազմաչափ աղքատության ազգային գնահատման համար հաշվի է առնվում տվյալ երկրի համատեքստը, աղքատության առանձին բնութագրերի վերաբերյալ մի շարք քննարկումներ են անցկացվում շահագրգիռ կողմերի հետ: Թեև այս մոտեցումը սահմանափակում է աղքատության գնահատականի միջազգային համադրելիությունը, դրա ավելացված արժեքը հենց իրենց՝ տվյալ երկրի բնակիչների կողմից ներկայացված զրկանքների վերաբերյալ ավելի լավ պատկերացում կազմելն է: Օրինակ, Հայաստանում գազի և էլեկտրաէներգիայի սակագների բարձրացման արդյունքում շատ տնային տնտեսություններ ստիպված են ավելի մեծ գումարներ հատկացնել ջեռուցման համար: Միևնույն ժամանակ, էապես աճել է այն տնային տնտեսությունների մասնաբաժինը, որոնք այժմ տունը ջեռուցելու համար փայտ կամ ածուխ են օգտագործում: Աղքատության մակարդակը նշված հանգամանքներով պայմանավորվելու պարագայում «առողջ ջեռուցման» հնարավորությունից զրկված լինելը բազմաչափ աղքատության չափումներից մեկն է: Այս զրկանքը ոչ միայն ի ցույց է դնում պատշաճ բնակարանային պայմանների կարևորությունը, այլև ընդգծում է առողջապահության և շրջակա միջավայրի հետ կապված բացասական ազդեցությունների մեղմացման ռազմավարությունների կարևորությունը:

Բազմաչափ աղքատությունն ուսումնասիրելու համար ընտրվել են Հայաստանում աղքատությունը բնութագրող զրկանքներ, որոնց քննարկումը կարող է նպաստել բնակչության կենսամակարդակի բարձրացմանն ուղղված քաղաքականությունների մշակմանը: Բազմաչափ աղքատության գնահատման համար դիտարկվել են հետևյալ **հինգ չափումները՝ հիմնական կարիքներ, բնակարանային պայմաններ, կրթություն, աշխատանք և առողջապահություն:** Գնահատումը կատարվել է տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (SSYUՀ) միջոցով հավաքված տվյալների հիման վրա, ինչը հնարավորություն է տվել ձևավորել համապետական մակարդակով ներկայացուցչական ժամանակային շարքեր, որոնք կարող են փոխկապակցվել երկրում դրամային աղքատության վերլուծության արդյունքների հետ: Միևնույն ժամանակ, տնային տնտեսությունների հետազոտության արդյունքների օգտագործումը հնարավոր զրկանքների ուսումնասիրությունը սահմանափակում է առկա տվյալների շրջանակում: Աղյուսակ 2.15-ում ամփոփ ներկայացված են այն չափումները և ցուցանիշները, որոնք թույլ են տալիս սուբյեկտիվ կերպով գնահատել գոյություն ունեցող զրկանքները:

Աղյուսակ 2.15. Բազմաչափ աղքատության գնահատման համար ընտրված չափումները և ցուցանիշները¹

Ջրկանք	Տնային տնտեսությունը համարվում է զրկված, եթե.
Չափում. հիմնական կարիքներ	
Ծայրահեղ աղքատություն	Անկարող է բավարարել սննդամթերքի նվազագույն պահանջները (ըստ աղքատության չափման ազգային մեթոդաբանության և Պարենի համաշխարհային կազմակերպության չափանիշների)
Արժանապատիվ կյանք	Չունի ֆինանսական միջոցներ՝ անհրաժեշտության դեպքում սնունդ և/կամ հագուստ գնելու համար
Մարդասիրական օգնություն	Հիմնական կենսագործունեությունն ապահովելու հարցում կախված է մարդասիրական օգնությունից
Դրամական փոխանցումներից կախվածություն	Հիմնական կենսագործունեությունն ապահովելու հարցում կախված է դրամական փոխանցումներից կամ գտնվում է ծայրահեղ (պարենային) աղքատության մեջ
Չափում. բնակարանային պայմաններ	
Բնակարանային պայմաններից բավարարվածություն	Չունի պատշաճ բնակարան, մասնավորապես՝ բնակարանային պայմանները գնահատվել են որպես վատ կամ շատ վատ
Պատշաճ բնակարան	Չունի պատշաճ բնակարան, մասնավորապես՝ բնակարանը կապիտալ վերանորոգման կարիք ունի, խոնավ է, գտնվում է հետնախորշերում կամ հին է, հատակածածկը և պատերը բարվոք վիճակում չեն
Գերբնակեցվածություն	Հասանելի բնակավերելքը չի գերազանցում մեկ չափահաս անձի հաշվով 20 քառակուսի մետրը
Առողջ ջեռուցում	Որպես ջեռուցման առաջնային աղբյուր օգտագործում է փայտ, ածուխ կամ այլ միջոցներ
Կենտրոնացված ջրամատակարարում	Չունի կենտրոնացված ջրամատակարարման համակարգի (դրանից օգտվելու) հնարավորություն
Կենտրոնացված ջրահեռացում և աղբահանություն	Չունի կենտրոնացված ջրահեռացման կամ աղբահանության համակարգի (դրանից օգտվելու) հնարավորություն
Հոսող տաք ջուր	Չունի հոսող տաք ջրի համակարգի (դրանից օգտվելու) հնարավորություն
Վճարովի հանրային ծառայությունների որակ	Գոհ չէ վճարովի ծառայությունների մեկ երրորդ կամ ավելի մասից (բոլոր պատասխանների համեմատ)՝ ջրամատակարարում, ջրահեռացում, աղբահանության, հեռախոս, էլեկտրամատակարարում, փոստ, բանկային ծառայություններ, ոռոգում, հասարակական տրանսպորտ
Տրանսպորտի հասանելիություն	Չունի տրանսպորտից օգտվելու հնարավորություն՝ տրանսպորտային համակարգը և (շուրջամյա) ճանապարհային ցանցը բացակայում են կամ վատ վիճակում են
Չափում. կրթություն	
Միջնակարգ կրթության բացակայություն	Ներկայի հետ կապված՝ 15-ից մինչև 75 տարեկան բոլոր անդամներն ունեն միջնակարգ (արհեստագործական կամ մասնագիտական) կրթամակարդակից ցածր կրթություն
Դպրոցական կրթության համակարգում ընդգրկվածություն	Ապագայի հետ կապված՝ պարտադիր ուսման 6-ից մինչև 17 տարեկան տարիքի առնվազն մեկ երեխա դպրոց չի հաճախում
Կրթական ծառայությունների հասանելիություն	Չունի հարևանությամբ գործող մանկապարտեզից, լրիվ միջնակարգ կրթության դպրոցից, հիմնական (հանրակրթական) դպրոցից օգտվելու հնարավորություն

¹ Աղյուսակում նշված բոլոր ցուցանիշները չէին կարող հաշվարկվել՝ հաշվի առնելով ՏՏԿԱՀ 2019-ի հարցաշարում կատարված փոփոխությունները: Ըստ այդմ, 2019թ.-ի համար առկա չեն հետևյալ ցուցանիշները՝ Տրանսպորտի հասանելիություն, Կրթական ծառայությունների որակ, Բնականոն գործունեության դադարեցում և Առողջապահական ծառայությունների հասանելիություն: Այս ցուցանիշների բացակայության պայմաններում դժվարանում է աղքատության բազմաչափ ցուցանիշի հաշվարկումն ու համադրելիության ապահովումը: Ստորև հակիրճ քննարկվում են Հայաստանում բազմաչափ աղքատության համաթվի փոփոխության միտումները (2010-2018թթ.):

Ջրկանք	Տնային տնտեսությունը համարվում է զրկված, եթե.
Կրթական ծառայությունների որակ	Գոհ չէ կրթական ծառայություններից
Չափում. աշխատանք	
Աշխատաշուկային մասնակցություն	Աշխատունակ տարիքի անդամների կեսից ավելին աշխատաշուկային չի մասնակցում
Երկարաժամկետ զբաղվածություն	Առնվազն մեկ անդամը երկարաժամկետ (կառուցվածքային) գործազրկության պատճառով չի աշխատում
Արժանավայել աշխատատեղեր	Ինքնազբաղի կարգավիճակով աշխատողին հասանելի չեն արժանավայել աշխատատեղեր
Թերզբաղվածություն	Չունի աշխատաշուկային լիարժեք մասնակցության հնարավորություն (բոլոր անդամները թերզբաղված են, զբաղվում են սեզոնային/ պատահական աշխատանքով)
Չափում. առողջապահություն	
Բնականոն գործունեության դադարեցում	Առնվազն մեկ անդամ հիվանդության, վնասվածքի կամ վատաառողջության պատճառով դադարեցրել է բնականոն գործունեությունը
Առողջապահական ծառայությունների մատչելիություն	Չունի ֆինանսական միջոցներ բուժհաստատությունների կողմից մատուցվող առողջապահական (բացառությամբ ատամնաբուժական) ծառայությունների, բժշկի կողմից նշանակված ստուգումների, ուսումնասիրությունների և պրոցեդուրաների դիմաց վճարելու համար (անվճար ծառայությունների անհասանելիության կամ դժվար հասանելիության դեպքում)
Առողջապահական ծառայությունների հասանելիություն	Չունի հարևանությամբ գործող բուժհաստատությունից, շտապօգնության ծառայություններից, դեղատնից օգտվելու հնարավորություն
Առողջապահական ծառայությունների որակ	Գոհ չէ առողջապահական ծառայություններից

Բազմաչափ աղքատության ցուցանիշն ամփոփում է մի շարք զրկանքների մասով առկա տեղեկատվությունը և նկարագրում աղքատության բազմակողմությունը, խորությունն ու տևականությունը: Այն ոչ միայն բացահայտում է որոշակի զրկանքներ կրող տնային տնտեսություններում ապրող անհատների տեսակարար կշիռը, այլև հաշվի է առնում նույն անհատին միաժամանակ բաժին ընկած զրկանքների քանակն ու փոխհամընկնումը: Ըստ սահմանման, տնային տնտեսության բոլոր անդամները որևէ չափման (լինեն դրանք հիմնական կարիքները, բնակարանային պայմանները, կրթությունը, աշխատանքը, թե առողջապահությունը) մասով համարվում են զրկված, եթե նշում են տվյալ չափման կշռված ցուցանիշների ավելի քան մեկ քառորդ մասից զրկվածության մասին: Օրինակ, տնային տնտեսության բոլոր անդամները հիմնական կարիքների մասով համարվում են զրկված, եթե տնային տնտեսությունը «չունի ֆինանսական միջոցներ՝ անհրաժեշտության դեպքում սնունդ և/կամ հագուստ գնելու համար» և միաժամանակ «հիմնական կենսագործունեությունն ապահովելու հարցում կախված է մարդասիրական օգնությունից» (տե՛ս. Աղյուսակ 2.15-ը): Ընդհանուր առմամբ, տնային տնտեսության բոլոր անդամները բազմաչափ աղքատ են, եթե բոլոր կշռված ցուցանիշների ավելի քան մեկ քառորդ մասով համարվում են զրկված:

Աղյուսակ 2.16. Բազմաչափ աղքատ համարվող տնային տնտեսություններում ապրող անհատների տեսակարար կշիռը, ըստ բնակավայրի

(բնակչության տոկոս)

	Ընդամենը	ք.Երևան	Այլ քաղաքային բնակավայրեր	Գյուղական վայրեր
2010թ.	41.2	32.6	37.2	52.8
2011թ.	33.9	27.3	30.4	43.3
2012թ.	31.3	25.1	30.1	38.3
2013թ.	30.5	25.8	27.6	37.2
2014թ.	31.9	28.5	31.6	35.2
2015թ.	29.1	28.0	25.9	32.7
2016թ.	27.8	28.0	24.7	30.3
2017թ.	26.0	21.9	22.0	32.5
2018թ.	23.6	18.4	22.1	29.2

Աղբյուր. SSԿԱՀ 2010-2018

Նշում. 2019թ. ցուցանիշները չեն հաշվարկվել՝ SSԿԱՀ 2019-ի հարցաթերթում փոփոխությունների պատճառով:

Աղյուսակ 2.16-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ ճգնաժամային 2010 թվականից հետո բազմաչափ աղքատության մակարդակը նվազել է: Ամբողջ երկրի մասշտաբով, բազմաչափ աղքատ բնակչության տեսակարար կշիռը 2010թ.-ի 41.2 տոկոսից նվազելով 2018թ.-ին կազմել է 23.6 տոկոս: Բազմաչափ աղքատության մակարդակն ըստ բնակչության վայրի դիտարկելն օգտակար տեղեկատվություն է տալիս և պատկերում դրամային աղքատության մակարդակից տարբերվող իրավիճակ: 2010թ.-ին գյուղական բնակչության 52.8 տոկոսը և Երևանից դուրս այլ քաղաքային շրջանների բնակչության 37.2 տոկոսը բազմաչափ աղքատ են եղել, մինչդեռ Երևանում բազմաչափ աղքատության մակարդակը կազմել է 32.6 տոկոս: 2010-2018թթ. ժամանակահատվածում բազմաչափ աղքատության մակարդակը նվազել է: 2018 թ.-ին այն կազմել է 22.1 տոկոս՝ այլ քաղաքային բնակավայրերում, 18.4 տոկոս՝ Երևանում, և 29.2%՝ գյուղական բնակավայրերում:

Ինչպես վերը նշվեց, SSԿԱՀ 2019-ի հարցաշարի փոփոխությունները և որոշ հարցերի մասով պատասխանների բացակայությունը թույլ չեն տալիս կատարել բազմաչափ աղքատության ամբողջական հաշվարկ: Փոխարենը, Աղյուսակ 2.17-ում ներկայացվում է 2018 և 2019 թվականների դրությամբ յուրաքանչյուր ցուցանիշի գծով զրկանքներ կրող բնակչության տեսակարար կշիռը: Գրեթե բոլոր ցուցանիշները վկայում են այն մասին, որ զրկված տնային տնտեսությունների տեսակարար կշիռը նվազել է: Հիմնական կարիքների չափումով բոլոր ցուցանիշները բարելավվել են: Բնակարանային պայմանների չափումով բոլոր ցուցանիշները բարելավվել են՝ բացառությամբ գերբնակեցվածության և առողջ ջեռուցման: Նմանապես, նվազել է երկարաժամկետ զբաղվածության, թերզբաղվածության և արժանավայել աշխատատեղերի մասով զրկված բնակչության տեսակարար կշիռը, իսկ աշխատաշուկային մասնակցության ցուցանիշով զրկված բնակչության տեսակարար կշիռը 21.6%-ից աճելով հասել է 25.3%-ի²¹: Սա հաշվի առնելով՝ կարելի է ենթադրել, որ 2019թ.-ին Հայաստանում բազմաչափ աղքատների ընդհանուր քանակը և բազմաչափ աղքատության համաթիվը նվազել են²:

¹ Սա թերևս պայմանավորված է SSԿԱՀ 2019-ի հարցաշարի փոփոխությամբ: Աշխատաշուկային մասնակցության ցուցանիշի վերաբերյալ Աշխատանքի տեսչությունից ստացված տվյալները վկայում են այն մասին, որ 2019 թ.-ին 2018թ.-ի համեմատ աշխատաշուկային մասնակցություն ունեցող բնակչության տեսակարար կշիռը չի փոխվել:

² ԲԱՀ-ի ժամանակագրական փոփոխությունների վերաբերյալ բոլոր մյուս գծապատկերների և տվյալների համար տե՛ս 2018թ.-ի սոցիալական պատկերի վերաբերյալ հաշվետվությունը (ՀՀ վիճակագրական կոմիտե, «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», 2019թ., վիճակագրական և վերլուծական զեկույց):

**Աղյուսակ 2.17. Զրկանքներ կրող բնակչության տեսակարար կշիռը,
ըստ ցուցանիշների, 2018թ. և 2019թ.**

Զրկանք	2018թ.	2019թ.
Չափում. հիմնական կարիքներ		
Ծայրահեղ աղքատություն	1.0%	1.4%
Արժանապատիվ կյանք	43.4%	39.3%
Մարդասիրական օգնություն	2.9%	2.1%
Դրամական փոխանցումներից կախվածություն	8.5%	6.7%
Չափում. բնակարանային պայմաններ		
Բնակարանային պայմաններից բավարարվածություն	18.7%	15.4%
Պատշաճ բնակարան	14.7%	13.6%
Գերբնակեցվածություն	30.0%	32.8%
Առողջ ջեռուցում	41.5%	39.1%
Կենտրոնացված ջրամատակարարում	31.6%	25.3%
Կենտրոնացված ջրահեռացում և աղբահանություն	33.9%	37.8%
Հոսող տաք ջուր	13.5%	12.6%
Վճարովի հանրային ծառայությունների որակ	11.8%	6.8%
Տրանսպորտի հասանելիություն	24.0%	
Չափում. կրթություն		
Միջնակարգ կրթության բացակայություն	4.8%	4.5%
Դպրոցական կրթության համակարգում ընդգրկվածություն	3.0%	3.3%
Կրթական ծառայությունների հասանելիություն	12.7%	5.2%
Կրթական ծառայությունների որակ	1.0%	
Չափում. աշխատանք		
Աշխատաշուկային մասնակցություն	21.6%	25.3%
Երկարաժամկետ զբաղվածություն	7.7%	5.5%
Արժանավայել աշխատատեղեր	47.5%	45.5%
Թերզբաղվածություն	40.9%	36.6%
Չափում. առողջապահություն		
Բնականոն գործունեության դադարեցում	17.4%	
Առողջապահական ծառայությունների մատչելիություն	10.9%	11.4%
Առողջապահական ծառայությունների հասանելիություն	12.2%	
Առողջապահական ծառայությունների որակ	20.1%	12.4%

Աղբյուր. SSԿԱՀ 2018 և 2019

2.8. Մարդու հնարավորությունների համաթիվը Հայաստանի համար

Տեստական անհավասարությունը վերջին տարիներին նորովի ուշադրության է արժանացել եկամուտների ավելի ու ավելի մեծ մասը բարձր եկամուտ ունեցողներին բաժին ընկնելու պատճառով: Բանավեճի առարկան սովորաբար անհավասարության մեծացման միանշանակորեն անցանկալի լինելն է: Այդուհանդերձ, վերջին մի շարք հետազոտություններ տարբերակում են անհավասարության «լավ» և «վատ» տեսակները: Արդյունքների անհավասարությունը համարվում է «լավ», եթե բխում է

ջանքերի, որոշումների կամ արժանիքների տարբերություններից: Կանխորոշված հանգամանքներից, ինչպիսիք են սեռը, էթնիկ և ռասայական պատկանելությունը, բխող տարբերությունները համարվում են «վատ» (*Բարոզ և այլք, 2009թ., Ֆերեյերա և Գինուս, 2011թ., Համաշխարհային բանկ, 2005թ.*): Հնարավորությունների անհավասարությունը ցույց է տալիս, թե որքանով կարող է արդյունքների անհավասարությունը վերագրվել այն հանգամանքներին, որոնց նկատմամբ անհատները վերահսկողություն չունեն:

Արդյունքների անհավասարության փոխարեն հնարավորությունների անհավասարության շեշտադրումը նախընտրելի է մի քանի պատճառներով: Արդյունքների անհավասարության վերաբերյալ քննարկումներին հատուկ են գաղափարական, բարոյական և փիլիսոփայական նրբություններ, որոնք դժվարացնում են փոխհամաձայնության հասնելը: Հնարավորությունների անհավասարությունն ընդդիմախոսության չի արժանանում, քանի որ մարդկանց մեծ մասը համաձայն է, որ բոլորը պետք է հավասար հնարավորություններ ունենան, և այս կամ այն պայմաններում ծնված լինելը չպետք է կանխորոշի արդյունքները, որոնց մարդն իր կյանքում կարող է հասնել: Արդարության պահանջը բավարարելուց զատ՝ հավասար հնարավորությունների ապահովումը նույնքան կարևոր է տնտեսական աճի համար: Փորձառական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հնարավորությունների անհավասար հասանելիությամբ բնութագրվող հասարակություններն ունեն մեկ շնչի հաշվով ավելի ցածր եկամուտներ (*Դաբալեն և այլք, 2015թ., Գրինս, 2011թ., Նարայան Մոլինա և Սասվեդրա-Չանդուվի, 2013թ.*):

Գոյություն ունի հնարավորությունների անհավասարության վերլուծության երկու հիմնական մեթոդ: Առաջինը տնտեսական հնարավորությունների անհավասարության (ՏՀԱ) մեթոդն է, որն արդյունքի փոփոխականից (օրինակ՝ եկամուտներից կամ ծախսերից) հանում է անհավասարության՝ անհատի վերահսկողությունից դուրս գտնվող հանգամանքներով պայմանավորված մասը: Մեթոդի կիրառության համար նախ սահմանվում է արտաքին հանգամանքների որոշակի համակազմ: Բնակչությունը բաժանվում է որոշակի «տիպային խմբերի» այնպես, որ նույն «տիպային խմբում» ներգրավված մարդկանց համար ընդհանրական լինի արտաքին հանգամանքների նույն համակազմը: Տիպային խմբերի միջև անհավասարությունը համարվում է անարդար, քանի որ վերագրելի է բացառապես հանգամանքներին:

Անհավասարության վերլուծության երկրորդ՝ Մարդու հնարավորությունների համաթիվ (ՄՀՀ) մեթոդը դիտարկում է ինչպես ներառվածության միջին մակարդակը, այնպես էլ հիմնական ապրանքների և ծառայությունների հասանելիության անհավասարությունը, որոնք անհատի՝ եկամուտներ ստեղծելու կարողության տեսանկյունից կենսականորեն կարևոր են համարվում: Օրինակ, ծառայությունների հասանելիության՝ արտաքին հանգամանքներով պայմանավորված տարբերությունները անհատներին իրենց կամքից անկախ տանում են միանգամայն տարբեր ուղիներով: Եթե որևէ հասարակությունում պատշաճ սննդի, որակյալ կրթության, մաքուր խմելու ջրի և ջրահեռացման ծառայությունների հասանելիությունը տարբերվում է՝ կախված անհատի սեռից, ծննդավայրից, էթնիկ կամ ռասայական պատկանելությունից կամ ծնողների սոցիալ-տնտեսական կարգավիճակից, սա նշանակում է, որ տվյալ հասարակությունում հնարավորություններն անհավասար են բաշխված:

ՄՀՀ-ի ձևավորմանը մասնակցում է երկու փոփոխական՝ ներառվածության մակարդակը (C) և տարբերակվածության համաթիվը (D): ՄՀՀ-ն հաշվարկվում է ներառվածության մակարդակը բնակչության տիպային խմբերի՝ այդ ցուցանիշով տարբերությունների չափով «տուգանելու» միջոցով: Ըստ այդմ, որքան մեծ է տարբերակվածության D համաթիվը, այնքան անհավասար է հնարավորությունների բաշխումը, և այնքան ցածր է ՄՀՀ-ն:

ՄՀՀ-ն օգտագործվում է հիմնականում երեխաներին առնչվող հնարավորությունների բաշխումը գնահատելու նպատակով, ում վերահսկողությունից հանգամանքները «իրապետ» դուրս են, մինչդեռ չափահասներին առնչվող հանգամանքները կարող են նույնական լինել անձնական ջանքերի հետ: Ամեն դեպքում, մեթոդաբանությունը հաշվի է առնում լավ աշխատատեղերի հասանելիությունը, ինչը կախված է թե անհատի վերահսկողության ներքո գտնվող գործոններից, ինչպիսիք են կրթությունը, փորձը և հմտությունները, թե անհատի վերահսկողությունից դուրս գտնվող գործոններից, ինչպիսիք են սեռը, ծնողների սոցիալ-տնտեսական կարգավիճակը, էթնիկ և ռասսայական պատկանելությունը: Այսպիսով, լավ աշխատատեղերի հասանելիության մասով ՄՀՀ-ն ընդհանուր անհավասարությունը տրոհում է «լավ» անհավասարության, որը բխում է մարդկային կապիտալի և ջանքերի տարբերություններից, և «վատ» անհավասարության, որի հիմքում ընկած են անբարենպաստ պայմանները և խտրականությունը:

Մարդու հնարավորությունների համաթիվ (ՄՀՀ) մեթոդաբանությունը

Որևէ հնարավորության ՄՀՀ-ն չափելի տեսքով ներկայացնում է տվյալ հասարակությունում ներառվածության մակարդակը և տարբեր հանգամանքներում գտնվող խմբերի միջև այդ ներառվածության արդարացի բաշխումը: Սա ներառվածության մակարդակի՝ անհավասարության նկատմամբ զգայուն գնահատական է, որի համաթիվը նվազում է կամ «տուգանվում է»՝ ելնելով այն բանից, թե բնակչության տարբեր հանգամանքներում գտնվող խմբերը ներառվածության ինչպիսի մակարդակ ունեն: Մասնավորապես.

$$ՄՀՀ = \text{Ներառվածություն} - \text{Տուգանք}$$

Այն երկրներում, որտեղ ըստ հանգամանքների զանազանվող բոլոր խմբերն ունեն ներառվածության նույն մակարդակը, տուգանքը զրոյական է: Հասարակության ՄՀՀ-ն կարող է աճել երեք եղանակով՝ որոշակի արտաքին հանգամանքների փոփոխությամբ (կազմի ազդեցություն), ընդհանուր ներառվածության մակարդակի փոփոխությամբ (մասշտաբի ազդեցություն) և ըստ հանգամանքների զանազանվող խմբերի միջև հնարավորությունների բաշխման փոփոխությամբ (հավասարեցման ազդեցություն): Առավելագույն արժեքը, որը ՄՀՀ-ն կարող է ունենալ, դիտարկվող ծառայության մասով ներառվածության միջին մակարդակն է, իսկ 1 արժեքի ՄՀՀ-ն հասնել կարող է միայն այն դեպքում, երբ ծառայության հասանելիությունը համընդհանուր է:

ՄՀՀ-ն կարող է արտահայտվել նաև ներառվածության մակարդակը հավասարության փոփոխականով բազմապատկելու միջոցով՝ հետևյալ կերպ.

$$H = \bar{p} * (1 - D)$$

որտեղ \bar{p} -ն տվյալ հնարավորության մասով միջին ներառվածությունն է, իսկ D -ն՝ տարբերակվածության համաթիվը (D -համաթիվ), որը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$D = \frac{1}{2\bar{p}} \sum_{k=1}^m \alpha_k |p_k - \bar{p}|$$

որտեղ p_k -ն k խմբի ներառվածության մակարդակն է (ուր յուրաքանչյուր խումբ սահմանվում է այդ խմբին յուրահատուկ հանգամանքների համակազմով), m -ը միմյանց փոխադարձաբար բացառող խմբերի քանակն է, իսկ α_k -ն՝ k խմբում ներառված ընդհանուր բնակչության մասնաբաժինը: D -

համաթիվը տվյալ խմբի համար հասանելիության և միջին հասանելիության ցուցանիշների տարբերության միջին կշռված ցուցիչն է: D-ն հավասար է O-ի, երբ ներառվածությունը ըստ հանգամանքների զանազանվող բոլոր խմբերում նույնն է: D-համաթիվը կարող է մեկնաբանվել որպես բոլոր հնարավորությունների այն մասը, որ պետք է \bar{p} -ից բարձր ներառվածությամբ խմբերից վերաբաշխվի \bar{p} -ից ցածր ներառվածությամբ խմբերին՝ բոլոր խմբերի համար հնարավորությունների լիարժեք հավասարության հասնելու նպատակով:

Հնարավորությունների համակազմի սահմանումը

Հայտնի փաստ է, որ կրթության, առողջապահության և հիմնարար ենթակառուցվածքների ոլորտի հիմնական ապրանքների ու ծառայությունների՝ հնարավորինս վաղ տարիքից հասանելիությունն անհրաժեշտ է, որպեսզի անհատը կարողանա լիարժեքորեն իրացնել իր ամբողջ ներուժը: Անհատի վերահսկողությունից դուրս գտնվող հանգամանքների պատճառով այդպիսի ծառայությունների անհավասար հասանելիությունը համարվում է անարդար: Առկա է նաև փորձառական հետազոտությունների մի մեծ բազմություն, որը ցույց է տալիս, որ վաղ տարիքից հնարավորությունների ապահովմանն ուղղված ներդրումները բնութագրվում են տնտեսական ծախսաարդյունավետության ամենաբարձր ցուցանիշներով, ինչն ավելի է կարևորում նման անհավասարություններից ձերբազատվելու խնդիրը:

Երեխային իր ներուժի լիարժեք իրացմանն անհրաժեշտ հնարավորությունների համապարփակ ցանկը կարող է չափազանց երկար լինել, իսկ դրանց վերլուծության համար անհրաժեշտ տվյալները՝ ոչ միշտ հասանելի: Այնուամենայնիվ, որոշ առանցքային ցուցանիշների մասով հնարավորությունների անհավասարությունը կարելի է վերլուծել, և Հայաստանում այդ ցուցանիշների ընտրության գործընթացը վերջերս ավարտվել է բազմաչափ աղքատության ազգային համաթվի սահմանմամբ: Ըստ սպառման աղքատության մակարդակի ցուցանիշը լրացնելու համար սահմանվել է քսաներեք զրկանք թվարկող հինգ չափում, որոնք են հիմնական կարիքները, բնակարանային պայմանները, կրթությունը, աշխատանքը և առողջապահությունը: Ցուցանիշների ընտրությանը նախորդել է երկրում բազմաթիվ շահագրգիռ կողմերի հետ մեծածավալ և ընդգրկուն խորհրդատվության գործընթացը: Արդյունքում, բազմաչափ զրկվածության ցուցանիշները բնական ելակետ են ապահովում հնարավորությունների անհավասարությունը գնահատելու համար: Մասնավորապես, հնարավորությունների անհավասարությունն ի հայտ է գալիս, երբ երեխաների համար հասանելի չեն մարդկային կապիտալի մուտքային բաղկացուցիչներին առնչվող հնարավորությունները հետևյալ չափումներում¹.

- **Պատշաճ բնակարան**՝ առկա է դժգոհություն բնակարանային և շրջակա միջավայրի պայմաններից,
- **Առողջ ջեռուցում**՝ բացակայում է կենտրոնացված ջեռուցման, էլեկտրականության, բնական գազի կամ հեղուկ գազի միջոցով ջեռուցման հնարավորությունը,
- **Կենտրոնացված ջրամատակարարում**՝ բացակայում է ամսվա յուրաքանչյուր օր և օրվա յուրաքանչյուր ժամի կենտրոնացված ջրամատակարարումից օգտվելու հնարավորությունը,
- **Կենտրոնացված աղբահանություն և ջրահեռացում**՝ կենտրոնացված աղբահանության, անհատական կամ աղբատարի եղանակով աղբի հավաքման տարբերակները բացակայում են,

¹ Բացի այդ, հետևյալ չափումները, որոնք ՏՏԿԱՀ 2019-ում առկա չեն, նույնպես ազդում են հնարավորությունների անհավասարության վրա. **Տրանսպորտի որակ**՝ հասանելի ճանապարհները ցածրորակ են, **Կրթական ծառայությունների հասանելիություն**՝ բացակայում է հարևանությամբ գործող մանկապարտեզից, հիմնական կամ միջնակարգ դպրոցից օգտվելու հնարավորությունը, և **Առողջապահական ծառայությունների հասանելիություն**՝ բացակայում է հարևանությամբ գործող բուժհաստատությունից, շտապօգնության ծառայություններից, դեղատնից օգտվելու հնարավորությունը: Յուրաքանչյուր չափանիշի մասով Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) շրջանակում առաջադրված հարցադրումները ներկայացված են Հավելվածում:

- Վճարովի հանրային ծառայությունների որակ՝ հանրային ծառայությունները գոհացուցիչ չեն,
- Դպրոցական կրթության համակարգում ընդգրկվածություն՝ պարտադիր դպրոցական ուսման տարիքի (6–17 տարեկան) առնվազն մեկ երեխա դպրոց չի հաճախում,
- Կրթության որակ՝ կրթական ծառայությունները գոհացուցիչ չեն,
- Առողջապահական ծառայությունների որակ՝ առողջապահական ծառայությունները գոհացուցիչ չեն:

Հնարավորությունների հասանելիությունը որոշվում է զրկվածության բացառմամբ, այսինքն՝ տնային տնտեսությունը որևէ հնարավորության հասանելիություն ունի, եթե զրկված չէ դրանից: Հիմնական հնարավորությունների հասանելիության գնահատումը կատարվում է բնակչության որոշակի խմբի՝ մինչև 15 տարեկան երեխաների համար՝ երկու բացառությամբ. դպրոցական կրթության համակարգում ընդգրկվածությունը և կրթական ծառայությունների որակը գնահատվում են պարտադիր դպրոցական ուսման տարիքի երեխաների համար (6-17 տարեկան):

Ինչպես արդեն քննարկվեց, հանգամանքները անհատի վերահսկողությունից դուրս գտնվող գործոններ են, որոնք արդյունքների վրա որևէ ազդեցություն չպետք է ունենան, եթե հասարակությունը ցանկանում է ձեռքագառնել հնարավորությունների անհավասարությունից: Այնուամենայնիվ, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի և Հարավային Կովկասի տարածաշրջանի վերաբերյալ փորձառական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հնարավորությունների հասանելիությունը կախված է արտաքին գործոններից (*Բարոզ և այլք, 2009թ., Դարալեն և այլք, 2015թ., Ֆոլքս և այլք, 2018թ.*):

Աշխատաշուկայում հնարավորությունների անհավասարության գնահատումը կապված է մեթոդաբանական լրացուցիչ խնդիրների հետ: Քանի որ անհատները տիրապետում են մարդկային կապիտալի տարբեր մակարդակների, որպիսիք ձեռք են բերել կրթության և փորձի միջոցով, լավ աշխատատեղերի անհավասար հասանելիության ոչ բոլոր դեպքերն են անցանկալի: Կրթության և փորձի տարբերություններով պայմանավորված անհավասարությունը համարվում է արդար, մինչդեռ հանգամանքներով պայմանավորված անհավասարությունն անարդար է: Հետևաբար, արժանավայել աշխատատեղերի հասանելիության մասով հնարավորությունների անհավասարությունը դիտարկելիս ի լրումն հանգամանքների պետք է հաշվի առնել նաև անհատի տարիքը և կրթությունը, իսկ հանգամանքների դերը պետք է մեկնաբանել հմտությունների և փորձի գործոնը հաշվի առնելուց հետո²: Աղքատության բազմաչափ գնահատման մեթոդաբանությամբ, իզական սեռի աշխատողը համարվում է արժանավայել աշխատատեղերի հասանելիությունից զրկված, եթե ունի ինքնագրադի կարգավիճակ: Ի լրումն արժանավայել աշխատատեղերի հասանելիության, վերլուծվում է նաև աշխատաշուկային մասնակցության և զբաղվածության հնարավորությունների հավասարությունը:


Հնարավորությունների անհավասարությունը Հայաստանում

¹ Երեխաներին առնչվող հանգամանքների առաջարկվող համակարգը ներառում է երեխայի սեռը, տարիքը, բնակչության վայրը, տնային տնտեսության ղեկավարի սոցիալ-ժողովրդագրական բնութագրերը (սեռը, տարիքը, կրթական մակարդակը և ընտանեկան կարգավիճակը), տնային տնտեսության տնտեսական-ժողովրդագրական բնութագրերը (տնային տնտեսության չափը, մանկահասակների, երեխաների և տարեցների առկայությունը), սպառման խումբը (քվինտիլը) և տնային տնտեսության այլ սոցիալ-տնտեսական բնութագրերը (ընտանեկան նպաստ կամ կենսաթոշակ ստանալը, պետական հատվածում աշխատող տնային տնտեսության անդամ ունենալը):

² Արժանավայել աշխատատեղերի հասանելիության առնչվող հանգամանքներն են անհատի սեռը, տարիքը, բնակչության վայրը, կրթական մակարդակը, ընտանեկան դրությունը, տնային տնտեսության տնտեսական-ժողովրդագրական բնութագրերը (տնային տնտեսության չափը, մանկահասակների, երեխաների և տարեցների առկայությունը), սպառման խումբը (քվինտիլը) և տնային տնտեսության այլ սոցիալ-տնտեսական բնութագրերը (ընտանեկան նպաստ կամ կենսաթոշակ ստանալը, պետական հատվածում աշխատող տնային տնտեսության անդամ ունենալը):

Բնակարանային պայմանների չափման տեսանկյունից, ՄՀՀ-ն հատկապես ցածր է առողջ ջեռուցման հասանելիության մասով, իսկ, օրինակ, աղբահանության և որակյալ տրանսպորտային ծառայությունները տուգանային լուրջ գործոն են՝ կապված ըստ հանգամանքների գնահատման խմբերի միջև դրանց անհավասար բաշխման հետ: ՄՀՀ-ն էապես տարբերվում է կրթությանն առնչվող հնարավորությունների երկու տեսակների՝ կրթության համակարգում ընդգրկվածություն և կրթական ծառայությունների որակի մասով: Հայաստանում երեխաները դպրոցական կրթության համակարգում ընգրկվածության շատ ավելի լավ հնարավորություններ ունեն, քան՝ որակյալ կրթական ծառայություններից օգտվելու: Մասնավորապես, ընդգրկվածության և հասանելիության ՄՀՀ-ն համապատասխանաբար 94.8 է, իսկ ծառայությունների որակի ՄՀՀ-ն՝ 87.9: Առողջապահական հաստատությունների որակի ՄՀՀ-ն (84.9) ցածր է կրթական ծառայությունների որակի ՄՀՀ-ից: Աշխատաշուկային առնչվող բոլոր արդյունքների թվում արժանավայել աշխատատեղերն ամենացածր ՄՀՀ-ն ունեն (28.8), քանի որ դրանք հասանելի են աշխատողների միայն մի փոքր մասին, իսկ ըստ հանգամանքների գնահատման խմբերի միջև դրանց անհավասարաչափ բաշխվածությունը տուգանային լուրջ ազդեցություն ունի:

Գծապատկեր 2.10. Երեխաների և աշխատողների ներառվածության մակարդակը, տարբերակվածության համաթիվը և Մարդու հնարավորությունների համաթիվը




Աղբյուրը. SSՀԱՀ 2019

Անհավասարության պատճառներն ավելի լավ հասկանալու համար կիրառվում է Տարբերակվածության համաթիվի տրոհման մեթոդը: Այս մեթոդով գնահատվում է յուրաքանչյուր հանգամանքի հարաբերական ներդրումը տարբերակվածության ընդհանուր գնահատականի մեջ:

Ուշագրավ եզրահանգումներից մեկն այն է, որ մարդու բնակության վայրն էական ազդեցություն ունի հնարավորությունների հասանելիության վրա (Գծապատկեր 2.11): Որոշ հնարավորությունների մասով աշխարհագրական գործոնը ծանրակշիռ դեր ունի. բնակության վայրով է պայմանավորված առողջ ջեռուցման, կենտրոնացված ջրամատակարարման, աղբահանության և ջրահեռացման հնարավորությունների անհավասարության շուրջ 70 և ավելի տոկոսը: Դեպքերի մեծ մասում հնարավորությունների անհավասարությունը կախված չէ երեխայի սեռից կամ տարիքից: Զարմանալի է, սակայն մի շարք ցուցանիշների մասով անհավասար հնարավորությունները պայմանավորված չեն տնային տնտեսությունների կենսամակարդակով: Եթե որևէ բնակավայրում հիմնական ծառայությունները հասանելի չեն, ապա այդպիսի ծառայությունների դիմաց վճարելու համար ֆինանսական միջոցներ ունենալն էապես չի մեծացնում դրանց հասանելիությունը:

Ինչպես արդեն քննարկվեց, աշխատաշուկայի արդյունքների մասով ՄՀՀ-ն արտացոլում է անհավասարության ինչպես «արդար», այնպես էլ «անարդար» պատճառների ազդեցությունը: Գծապատկեր 2.12-ը ցույց է տալիս, որ աշխատաշուկային մասնակցության, զբաղվածության և արժանավայել աշխատատեղերի հասանելիության մասով անհավասարությունների մեծամասնությունը պայմանավորված է «անարդար» պատճառներով: Մասնավորապես, աշխատաշուկային մասնակցության և զբաղվածության մասով էական դեր են խաղում ամուսնական կարգավիճակը և բնակության վայրը, մինչդեռ արժանավայել աշխատատեղերի մասով կարևոր գործոններ են բնակության վայրը և պետական հատվածում աշխատատեղերի հասանելիությունը:

**Գծապատկեր 2.11. Երեխաներին առնչվող հնարավորությունների մասով
Տարբերակվածության համաթվի տրոհումը**




Աղբյուրը. SSՀԱՀ 2019

Նշում. Բնակության վայրի փոփոխականը վերաբերում է Երևանին, այլ քաղաքային բնակավայրերին կամ գյուղական բնակավայրերին:

Գծապատկեր 2.12. Աշխատաշուկային առնչվող հնարավորությունների մասով

Տարբերակվածության համաթվի տրոհումը



Աղբյուրը. *SSԿԱՀ 2019*

Նշում. *Բնակության վայրի փոփոխականը վերաբերում է Երևանին, այլ քաղաքային բնակավայրերին կամ գյուղական բնակավայրերին:*

2.9. Սոցիալական բացառումները Հայաստանում

Նյութական բացառումները ԵՄ-ի մոտեցումներով այն ցուցանիշն է, որն արտահայտում է մարդկանց մեծամասնության կողմից որոշ ցանկալի կամ նույնիսկ անհրաժեշտ ապրանքների ձեռք բերման անկարողությունը՝ համապատասխան ընդունելի կյանք վարելու համար: Ցուցանիշը տարբերում է այն մարդկանց, ովքեր չեն կարող որոշակի ապրանքներ կամ ծառայություններ իրենց թույլ տալ, և նրանց, ովքեր չունեն այդ ապրանքը կամ ծառայությունն՝ այլ պատճառներով, օրինակ՝ նրանք չեն ցանկանում կամ կարիք չունեն:

«Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ» ԵՄ Թվինինգ ծրագրի շրջանակներում սոցիալական բացառումների վիճակագրության մշակման նպատակով արդեն 2016 թ.-ին ՏՏԿԱՀ-ի ընտրանքի մեջ ընդգրկված բոլոր տնային տնտեսությունները պատասխանել են Սոցիալական բացառումներ մոդուլային հարցաթերթի հարցերին, իսկ 2018թ.-ից սկսած մոդուլային հարցաթերթի բոլոր հարցերը ներառվել են ՏՏԿԱՀ-ի հարցաթերթի մեջ: Ընդհանուր առմամբ, սոցիալական բացառումների ուսումնասիրությունը լրացնում է և դրամային, և բազմաչափ աղքատության վերաբերյալ վերլուծությունը, ինչպես նաև վկայում է այս երեք տարբեր հասկացությունների միջև հստակ արտահայտված կապերի մասին: 2019թ.-ին անցկացված ՏՏԿԱՀ միջոցով ստացված արդյունքները ցույց են տալիս նյութական զրկվածության աստիճանը Հայաստանում:

2019թ.-ից սկսած անցում է կատարվել 13 ցուցանիշներից բաղկացած նոր հավաքածուին: Զրկվածության տարածվածության ցուցանիշը (13 ցուցանիշներից կազմված) հաշվարկվել է հետևյալ կերպ՝ նյութական զրկվածության շեմը 13 ցուցանիշներից առնվազն 5-ի առկայությունն է, իսկ սուր նյութական զրկվածության շեմը՝ 13-ից առնվազն 7-ի առկայությունը:

ԵՄ-ի կողմից վերանայված զրկվածության ցուցանիշները հավաքագրվել են սկսած 2019թ.-ից և համադրելիությունը պահպանելու նպատակով ԱՐՄՍՍՍՍ-ը կարդիականացնի իր մոտեցումները՝ համաձայն Եվրոստատի մեթոդաբանության:

Այսպիսով, ԱՐՄՍՍՍՍ-Ը հաշվարկել է նյութական զրկվածության աստիճանը տարբեր շեմերով, որոնց շնորհիվ իրականացվում են նյութական ծայրահեղ զրկվածության ցուցանիշների միջազգային համեմատություններ:

Զրկվածության ցուցանիշների նոր տարբերակը:

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս ԵՄ-ի կողմից վերանայված զրկվածության ցուցանիշները, որոնք հավաքագրվում են 2019թ.-ից սկսած:

Աղյուսակ 2.18. Հայաստան. Մոնիթինգային ցուցանիշների նոր 13 հիմնական ցուցանիշները, 2019թ.

<i>Ցուցանիշներ</i>	<i>Բնակչության %-ը, որը զրկված է, ըստ ցուցանիշի</i>
<i>Չի կարող իրեն թույլ տալ</i>	
առնվազն մեկ շաբաթ տևողությամբ արձակուրդը անցկացնել տնից հեռու (տնային տնտեսությունն ամբողջությամբ)	76
փոխարինել մաշված կահույքը՝ ներառյալ կահույքի առանձին առարկաները	74*
կատարել անսպասելի ծախս 45.000 դրամի չափով և վճարել սեփական ռեսուրսներով (առանց պարտք վերցնելու կամ ֆինանսական օգնություն խնդրելու)	71
տնից դուրս կանոնավոր կերպով (տարեկան մի քանի անգամ) մասնակցել վճարովի ժամանցային այնպիսի միջոցառումների, ինչպիսիք են սպորտը, կինոն, համերգը և այլն	77
օրը մեջ մտնել, հավով, ձկնով (կամ համարժեք բուսականության) կերակուր ուտել	54
ավտոմեքենա ունենալ	48
ծախսել իր վրա շաբաթական փոքր գումար (առանց ստիպված լինելու խորհրդակցել որևէ մեկի հետ)	43
մասնակցել ընկերների/ընտանիքի, բարեկամների հետ ճաշկերույթի/ խնջույքի ամիսը առնվազն մեկ անգամ	49
Տանը բավարար ջերմություն ապահովել	49
Ժամանակին վճարել վարձակալության կամ հիմնական կացարանի հիփոթեքի համար	12
փոխարինել մաշված հագուստը (ներառյալ հնաճ հագուստը) նոր, նախկինում չօգտագործված հագուստով	30
Ունենալ բջջային հեռախոս	3
Ինտերնետային կապ ունենալ	24

Աղբյուրը. *SS4ԱՀ 2019թ.*

Նշում. * Ներկայացված է 2018թ. ցուցանիշը, քանի որ 2019թ.-ի SS4ԱՀ հարցաշարում կատարված փոփոխությունների պատճառով՝ <<փոխարինել մաշված կահույքը՝ ներառյալ կահույքի առանձին առարկաները>> հարցը տեխնիկական պատճառով բացակայում է:

Ստորև բերված աղյուսակի տվյալները ցույց են տալիս բնակչության զրկվածության աստիճանն ըստ նշված ցուցանիշների քանակի:

Աղյուսակ 2.19. Հայաստան. Բնակչության տեսակարար կշիռը, որը զրկված է ըստ առնվազն նշված քանակի ցուցանիշների, 2019թ.

	%-ով բնակչության մեջ
Զրկված է ըստ 1 կամ ավելի ցուցանիշի	94
Զրկված է ըստ 2 կամ ավելի ցուցանիշի	87
Զրկված է ըստ 3 կամ ավելի ցուցանիշի	80
Զրկված է ըստ 4 կամ ավելի ցուցանիշի	72
Զրկված է ըստ 5 կամ ավելի ցուցանիշի	63
Զրկված է ըստ 6 կամ ավելի ցուցանիշի	52
Զրկված է ըստ 7 կամ ավելի ցուցանիշի	40
Զրկված է ըստ 8 կամ ավելի ցուցանիշի	26
Զրկված է ըստ 9 կամ ավելի ցուցանիշի	15
Զրկված է ըստ 10 կամ ավելի ցուցանիշի	6
Զրկված է ըստ 11 կամ ավելի ցուցանիշի	1
Զրկված է ըստ 12 կամ ավելի ցուցանիշի	0.1

Աղբյուրը. *SSYUL* 2019թ.

2.10. Աղքատությունը գյուղական վայրերում

2019թ.-ին գյուղական բնակչության աղքատության մակարդակը բարձր է միջին հանրապետականից (33.2%, 26.4%-ի դիմաց) (Գլուխ 2, Աղյուսակ 2.1):

Հողի առկայությունը. Հողի սեփականությունը մեծ դեր է խաղում գյուղական բնակավայրերում աղքատության մակարդակի կրճատման գործում: 2019թ.-ին այն տնային տնտեսությունները, որոնք ապրում են գյուղական բնակավայրերում և չունեն հողակտոր, կազմում են 13.2% և նրանց աղքատության մակարդակը կազմում է 30.2%: Իսկ հողակտոր ունեցողների շրջանում աղքատության մակարդակը տատանվում է 24.4%-ից 30.2%-ը (Աղյուսակ 2.20):

Աղյուսակ 2.20. Հայաստան. Տնային տնտեսությունների աղքատության մակարդակը գյուղական վայրերում ըստ հողակտորի առկայության և չափերի, 2008 և 2019թթ

(տոկոսներով)

Հողակտորի չափը (հեկտար)	2008թ.		2019թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ (առանց ծայրահեղ աղքատների)	Ծայրահեղ աղքատ	Աղքատ (առանց ծայրահեղ աղքատների)	%-ն աղքատների մեջ	%-ը գյուղա բնակ տնային տնտեսությունների մեջ
0 հա	0.5	21.4	2.1	30.2	14.0	13.2
Մինչև 0.2 հա	1.1	24.3	2.2	30.6	34.8	32.8
0.2 – 0.5 հա	0.9	20.9	0.4	24.4	10.7	12.5
0.5 – 1 հա	1.7	20.5	0.3	22.1	13.7	15.5
Ավելի քան 1 հա	0.5	28.2	1.1	30.2	26.7	25.9
Գյուղական վայրեր, ընդամենը ըստ տնային տնտեսությունների	1.4	24.4	1.4	28.3	100	100

Աղբյուրը. *SSYUL* 2008 և 2019թթ.

2.11. Մանկական աղքատություն

2019թ.-ի տվյալները ցույց են տալիս մանկական աղքատության տարբերությունն ըստ սեռի. աղքատ է աղջիկների՝ 33.4 և տղաների՝ 33.7%-ը, իսկ ծայրահեղ աղքատ է աղջիկների՝ 2.8 և տղաների՝ 1.8%-ը:

Աղյուսակ 2.21. Հայաստան. Մանկական աղքատության մակարդակը 2019թ.-ին

(տոկոսներով)

	0-18 տարեկան երեխաները	այդ թվում		Ամբողջ բնակչությունը (համեմատության համար)
		աղջիկներ	տղաներ	
Ծայրահեղ աղքատություն	2.3	2.8	1.8	1.4
Ընդհանուր աղքատություն	33.6	33.4	33.7	26.4

Աղբյուրը. *SSԿԱՀ 2019թ.*

2008-2018թթ.-ի մանկական աղքատության պատկերը ներկայացվում է նախաֆինանսական ճգնաժամի տվյալների հետ համեմատելով: Մանկական աղքատության ցուցանիշների միտումները բերված են Աղյուսակ 2.22-ում, որտեղից երևում է, որ մանկական աղքատության և այդ թվում՝ ծայրահեղ աղքատության մակարդակները 2018թ.-ին ցածր են, քան 2008թ.-ի մակարդակը (համապատասխանաբար՝ տարբերությունը 0.6 և 0.1 %-ային կետ):

Աղյուսակ 2.22. Հայաստան. Մանկական աղքատության ցուցանիշների դինամիկան 2008-2018թթ.-ին*, 2019թ.**

(տոկոսներով)

	Ծայրահեղ աղքատ	Աղքատ (վերին գիծ)	Ոչ աղքատ
2008թ.	1.6	29.8	70.2
2009թ.	3.8	35.7	64.3
2010թ.	3.7	41.4	58.6
2011թ.	4.7	41.9	58.1
2012թ.	3.3	36.2	63.8
2013թ.	3.3	37.3	62.7
2014թ.	3.3	34.0	66.0
2015 թ.	2.5	33.7	66.3
2016թ.	2.0	34.2	65.8
2017թ.	2.1	30.8	69.2
2018թ.	1.5	29.2	70.8
2019թ.**	2.3	51.7	48.3

Աղբյուրը. *SSԿԱՀ 2008-2018թթ., 2019թ.*

Նշում * Համադրելիության բերելու նկատառումով 2008թ.-ի ցուցանիշները վերահաշվարկվել են ըստ 2009թ.-ին կիրառված մեթոդաբանության

** Ցուցանիշները հաշվարկվել են *SSԿԱՀ 2019թ.-ի* հիման վրա վերանայված աղքատության գնահատման մեթոդաբանությամբ:

Հավելված. Հնարավորությունների հասանելիության սահմանումը, ՏՏԿԱՀ 2019

Հնարավորություններ	Առնչվող խումբը	Տվյալների շտեմարանում փոփոխականի անվանումը
Չափում. բնակարանային պայմաններ		
Առողջ ջեռուցում	Երեխաներ	hous_29__1, hous_29__2, hous_29__3, hous_29__4, hous_29__5, hous_29__6, hous_29__7, hous_29__8, hous_29__9
Պատշաճ բնակարանային պայմաններ	Երեխաներ	hous_47
Կենտրոնացված ջրամատակարարում	Երեխաներ	hous_13, hous_14, hous_15
Կենտրոնացված ջրահեռացում և աղբահանություն	Երեխաներ	hous_service__2, hous_service__2, hous_39
Վճարովի հանրային ծառայությունների որակ	Երեխաներ	hous_47
Տրանսպորտի հասանելիություն	Երեխաներ	
Չափում. կրթություն		
Դպրոցական կրթության համակարգում ընդգրկվածություն	Երեխաներ	ed_05, age
Կրթական ծառայությունների որակ	Երեխաներ	hous_47
Կրթական հաստատությունների հասանելիություն	Երեխաներ	
Չափում. առողջապահություն		
Առողջապահական ծառայությունների որակ	Երեխաներ	hous_47
Առողջապահական հաստատությունների հասանելիություն	Երեխաներ	
Չափում. աշխատանք		
Աշխատաշուկային մասնակցություն	Աշխատանքային տարիքի բնակչություն	age, emp_04, est_14
Զբաղվածություն	Աշխատունակ տարիքի բնակչություն	age, emp_04, est_14
Արժանավայել աշխատատեղեր	Աշխատունակ տարիքի բնակչություն	age, emp_04, est_14, emp_05